ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ «ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գլխավոր տեղեկություն

Համար	թիվ 876
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Ինկորպորացիա (26.06.2021-26.04.2026)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	Միասնական կայք 2023.05.01-2023.05.14 Պաշտոնական հրապարակման օրը 02.05.2023
Ընդունող մարմին	Մաքսային միության հանձնաժողով
Ընդունման ամսաթիվ	09.12.2011
Ստորագրող մարմին	Մաքսային միության հանձնաժողովի անդամներ
Ստորագրման ամսաթիվ	09.12.2011
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	15.12.2011

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 դեկտեմբերի 2011 թվականի | **թիվ 876** | քաղ. Մոսկվա

«ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ղազախստանի Հանրապետությունում, Բելառուսի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում տեխնիկական կանոնակարգման միասնական սկզբունքների և կանոնների մասին» 2010 թվականի նոյեմբերի 18-ի համաձայնագրի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Մաքսային միության հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ***որոշեց.***

1. Ընդունել «Թեթև արդյունաբերության արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (ՄՄ ՏԿ 017/2011) (կցվում է)։

2. ***(կետն ուժը կորցրել է ԵՏՀԿ 22.12.20 թիվ 180)***

3. Սահմանել՝

3.1. «Թեթև արդյունաբերության արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (այսուհետ՝ տեխնիկական կանոնակարգ) ուժի մեջ է մտնում 2012 թվականի հուլիսի 1-ից.

3.2. Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջներին համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերը, որոնք տրվել կամ ընդունվել են տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կարգավորման առարկա հանդիսացող արտադրանքի (այսուհետ՝ արտադրանք) առնչությամբ, մինչև տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը, վավերական են մինչև դրանց գործողության ժամկետի ավարտը, սակայն 2014 թվականի հուլիսի 1-ից ոչ ուշ։ Նշված փաստաթղթերը, որոնք տրվել կամ ընդունվել են մինչև սույն որոշման պաշտոնական հրապարակման օրը, վավերական են մինչև դրանց գործողության ժամկետի ավարտը։

Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ ավելի վաղ սահմանված պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերի տրամադրումը կամ ընդունումը չի թույլատրվում.

3.3. մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը թույլատրվում է Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ ավելի վաղ սահմանված պարտադիր պահանջներին համապատասխան արտադրանքի արտադրությունը և շրջանառության մեջ դնելը՝ նշված պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման) մասին այն փաստաթղթերի առկայության դեպքում, որոնք տրամադրվել կամ ընդունվել են մինչև տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը։

Նշված արտադրանքը մակնշվում է համապատասխանության ազգային նշանով (շուկայում շրջանառության նշանով)՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը կամ Հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 386 որոշմանը համապատասխան։

Այդ արտադրանքի մակնշումը Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով չի թույլատրվում.

3.4. սույն որոշման 3.2 ենթակետում նշված համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերի գործողության ժամկետում շրջանառության մեջ դրված արտադրանքի շրջանառությունը թույլատրվում է արտադրանքի՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան սահմանված ծառայության ժամկետի ընթացքում։

4. Հանձնաժողովի քարտուղարությանը՝ Կողմերի հետ համատեղ պատրաստել տեխնիկական կանոնակարգի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների ծրագրի նախագիծը և սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից՝ եռամսյա ժամկետում սահմանված կարգով այն ներկայացնել Հանձնաժողովի հաստատմանը։

5. Ղազախական կողմին՝ Կողմերի մասնակցությամբ ստանդարտների կիրառման արդյունքների մշտադիտարկման հիման վրա ապահովել սույն որոշման 2-րդ կետում նշված ցանկերի արդիականացման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը և տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած տարեկան առնվազն մեկ անգամ դրանք Հանձնաժողովի քարտուղարություն ներկայացնելը՝ սահմանված կարգով Հանձնաժողովի կողմից հաստատվելու համար։

6. Կողմերին՝

6.1. մինչև տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը՝ սահմանել տեխնիկական կանոնակարգի պահանջները պահպանելու նկատմամբ պետական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելու համար պատասխանատու պետական հսկողության (վերահսկողության) մարմինները և դրա մասին տեղեկացնել Հանձնաժողովին.

6.2. տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից՝ ապահովել տեխնիկական

կանոնակարգի պահանջները պահպանելու նկատմամբ պետական հսկողության (վերահսկողության) իրականացումը՝ հաշվի առնելով սույն որոշման 3.2 - 3.4 ենթակետերը։

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման ամսաթվից։

Մաքսային միության հանձնաժողովի անդամներ՝

Բելառուսի Հանրապետությունից	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**
Ս. Ռումաս	ՈՒ. Շուկեեվ	Ի. Շուվալով

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Մաքսային միության հանձնաժողովի
2011 թվականի դեկտեմբերի 9-ի
N 876 որոշմամբ

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՄՄ ՏԿ 017/2011

Թեթև արդյունաբերության արտադրանքի անվտանգության մասին

Բովանդակություն

Նախաբան 4
Հոդված 1. Կիրառության ոլորտը.
Հոդված 2. Սահմանումները.
Հոդված 3. Շուկայում շրջանառության կանոնները.
Հոդված 4. Թեթև արդյունաբերության արտադրանքի անվտանգության ընդհանուր պահանջները
Հոդված 5. Մանածագործական նյութերի, դրանցից պատրաստված արտադրատեսակների, հագուստի, մանածագործական-գալանտերեային արտադրատեսակների անվտանգության պահանջները
Հոդված 6. Կոշկեղենի, կաշվի, արհեստական կաշվի և կաշվե-գալանտերեային արտադրատեսակների անվտանգության պահանջներ.
Հոդված 7. Մշակված կաշվից, մորթուց, մորթե մորթիկներից հագուստի և արտադրատեսակների անվտանգության պահանջները.
Հոդված 8. Մեխանիկական արտադրման գորգագործական ծածկերի և արտադրատեսակների, թաղիքի, նրբաթաղիքի և ոչ գործվածքային նյութերի և այդ նյութերից պատրաստի արտադրատեսակների անվտանգության պահանջները.
Հոդված 9. Արտադրանքի մակնշմանը ներկայացվող պահանջները.
Հոդված 10. Անվտանգության պահանջներին համապատասխանության ապահովումը
Հոդված 11. Արտադրանքի՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության հավաստումը.
Հոդված 12. Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշումը.
Հոդված 13. Պաշտպանության մասով վերապահումը.
Հավելված 1. Այն արտադրանքի ցանկը, որի վերաբերյալ սահմանվում են սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջները.
Հավելված 2. Մանածագործական նյութերին, արտադրատեսակներին և դրանցից պատրաստված հագուստին, մանածագործական-գալանտերեային արտադրատեսակների կենսաբանական և քիմիական անվտանգության պահանջները
Հավելված 3. Մանածագործական, պոլիմերային և այլ նյութերից, կաշվից, արհեստական կաշվից և դրանցից պատրաստված թեթև արդյունաբերության արտադրատեսակների քիմիական անվտանգության պահանջները
Հավելված 4. Մանածագործական-օժանդակ նյութերով մշակված մանածագործական նյութերի և դրանցից պատրաստված արտադրատեսակների քիմիական անվտանգության պահանջները
Հավելված 5. Կոշկեղենի մեխանիկական ու կենսաբանական անվտանգության պահանջները.
Հավելված 6. Կաշվե-գալանտերեային արտադրատեսակների մեխանիկական ու կենսաբանական անվտանգության պահանջները.
Հավելված 7. Կաշվե-գալանտերեային արտադրատեսակների և դրանց պատրաստման համար նյութերի քիմիական անվտանգության պահանջները՝ կախված նյութի բաղադրությունից
Հավելված 8. Կաշվի, մորթու և դրանցից պատրաստված արտադրատեսակների քիմիական և կենսաբանական անվտանգության պահանջները.

Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ

«Թեթև արդյունաբերության արտադրանքի անվտանգության մասին»

Նախաբան

1. «Թեթև արդյունաբերության արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության սույն տեխնիկական կանոնակարգը (այսուհետ՝ Տեխնիկական կանոնակարգ) մշակվել է «Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում տեխնիկական կանոնակարգման միասնական սկզբունքների և կանոնների մասին» 2010 թվականի նոյեմբերի 18-ի համաձայնագրին համապատասխան:

2. Սույն Տեխնիկական կանոնակարգը մշակվել է Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվող թեթև արդյունաբերության արտադրանքի նկատմամբ կիրառության և կատարման համար պարտադիր միասնական պահանջներ սահմանելու, թեթև արդյունաբերության արտադրանքի ազատ տեղաշարժն ապահովելու նպատակով:

3. Եթե թեթև արդյունաբերության արտադրանքի վերաբերյալ ընդունվեն Մաքսային միության այլ տեխնիկական կանոնակարգեր և (կամ) Եվրասիական տնտեսական համայնքի (այսուհետ՝ ԵվրԱզԷՍ) տեխնիկական կանոնակարգեր, որոնցով սահմանվում են պահանջներ տվյալ արտադրանքի նկատմամբ, ապա թեթև արդյունաբերության արտադրանքը պետք է համապատասխանի Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի և (կամ) ԵվրԱզԷՍ-ի այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրա վրա:

Հոդված 1. Կիրառության ոլորտը

1. Սույն Տեխնիկական կանոնակարգը տարածվում է Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվող թեթև արդյունաբերության արտադրանքի վրա:

2. Թեթև արդյունաբերության արտադրանքին (այսուհետ՝ արտադրանք), որի վրա տարածվում է սույն Տեխնիկական կանոնակարգի գործողությունը, դասվում են՝

- մանածագործական նյութերը,
- հյուսվածքային և տրիկոտաժե հագուստն ու արտադրատեսակները,
- գորգագործական, մեքենայական արտադրության ծածկոցները և արտադրատեսակները,
- կաշվե-գալանտերեային և մանածագործական-գալանտերեային արտադրատեսակները,
- թաղիքը, նրբաթաղիքը և ոչ գործվածքային նյութերը,
- կոշկեղենը,
- մորթեղենը և մորթե արտադրատեսակները,
- կաշին և կաշվե արտադրատեսակները,
- արհեստական կաշին:

3. Այն արտադրանքի ցանկը, որի վերաբերյալ սահմանվում են սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջները, նշված է սույն Տեխնիկական կանոնակարգի 1-ին հավելվածում:

4. Սույն Տեխնիկական կանոնակարգը չի տարածվում արտադրանքի հետևյալ տեսակների վրա՝

- գործածության մեջ եղած արտադրանք,
- բնակչության անհատական պատվերներով պատրաստված արտադրանք,
- բժշկական նշանակության արտադրատեսակներ,
- հատուկ, գերատեսչական, անհատական պաշտպանության միջոց հանդիսացող արտադրանք և դրա պատրաստման համար նյութեր,
- երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանք,
- փաթեթավորման մանածագործական նյութեր, գործվածքային պարկեր,
- տեխնիկական նշանակության նյութեր և դրանցից պատրաստված արտադրատեսակներ,
- հուշանվերային արտադրանք և գեղարվեստական ստեղծագործական արտադրատեսակներ,
- սպորտային խմբերի հանդերձանքի համար նախատեսված սպորտային արտադրատեսակներ,
- պոստիժերային արտադրանք (կեղծամներ, դնովի բեղեր, մորուքներ և այլն):

5. Սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանվում են թեթև արդյունաբերության արտադրանքին ներկայացվող՝ Մաքսային միության տարածքում պարտադիր պահանջները՝ մարդու կյանքի և առողջության պաշտպանության, ինչպես նաև արտադրանքն օգտագործողներին (սպառողներին) մոլորության մեջ գցող գործողությունները կանխարգելելու նպատակով:

Հոդված 2. Սահմանումները

Սույն Տեխնիկական կանոնակարգում կիրառվում են հետևյալ եզրույթները և դրանց սահմանումները՝

կենսաբանական անվտանգություն՝ արտադրանքի այն վիճակը, որի դեպքում բացակայում է սահմանված պահանջներին՝ կենսաբանական, թունաբանական, ֆիզիկական և

ֆիզիկաքիմիական հատկությունների անհամապատասխանության պատճառով օգտագործողի (սպառողի) առողջությանը վնաս պատճառելու կամ կյանքը վտանգելու հետ կապված անթույլատրելի ռիսկը.

վնասակար քիմիական նյութեր՝ քիմիական նյութեր, որոնք արտադրանքն օգտագործելիս օգտագործողի առողջական վիճակում կարող են առաջացնել բացասական շեղումներ՝ դրանք արտադրատեսակում՝ այդպիսի նյութերի թույլատրելի խտությունները գերազանցող քանակությամբ պարունակվելու դեպքում.

արտադրանքը շրջանառության մեջ դնել՝ Մաքսային միության անդամ պետություններում այն արտադրանքի շուկայահանումը, որն ուղարկվում է պատրաստողի, վաճառողի կամ օտարերկրյա պատրաստողի գործառույթները կատարող անձի պահեստից, կամ որը բեռնվում է առանց պահեստավորման կամ արտահանվում է Մաքսային միության անդամ պետությունների տարածքում իրացվելու համար.

հայտատու՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը դիմում է արտադրանքի՝ սույն Տեխնիկական կանոնակարգին համապատասխանությունը սերտիֆիկացման կամ համապատասխանության մասին հայտարարագիր ընդունելու միջոցով հավաստելու համար.

նույնականացում՝ թեթև արդյունաբերության արտադրանքը սույն Տեխնիկական կանոնակարգի կիրառման ոլորտին դասելու և տվյալ արտադրանքի՝ դրա տեխնիկական փաստաթղթերին համապատասխանությունը որոշելու ընթացակարգ.

պատրաստող՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձ, որն իր անունից իրականացնում է թեթև արդյունաբերության արտադրանքի արտադրությունն ու իրացումը և պատասխանատու է սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին դրա համապատասխանության համար.

ներմուծող՝ Մաքսային միության անդամ պետության ռեզիդենտ, որը Մաքսային միության անդամ պետության ոչ ռեզիդենտի հետ կնքել է թեթև արդյունաբերության արտադրանքի փոխանցման արտաքին առևտրային պայմանագիր, իրականացնում է այդ արտադրանքի իրացումը և պատասխանատվություն է կրում սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին դրա համապատասխանության համար.

թունավորության ինդեքս՝ ընդհանուր սուր թունավորության ինտեգրալ ցուցանիշ, որը որոշվում է «in vitro» պայմաններում (փորձանոթում) բջջային կուլտուրայի վրա.

մեխանիկական անվտանգություն՝ արտադրանքի մեխանիկական հատկությունների քանակական ցուցանիշների և կառուցվածքային բնութագրերի ամբողջություն, որն ապահովում է օգտագործողի (սպառողի) առողջությանը վնաս հասցնելու կամ կյանքը վտանգելու ռիսկի նվազեցումը.

արտադրանքի շրջանառությունը շուկայում՝ արտադրանքի շարժը պատրաստողից՝ օգտագործողին (սպառողին), որն ընդգրկում է այն բոլոր գործընթացները, որով անցնում է այդ արտադրանքը դրա արտադրության ավարտից հետո.

հագուստ՝ արտադրատեսակ (կամ արտադրատեսակների ամբողջություն), որը (որոնք) կրում է մարդը և որն (որոնք) ունի (ունեն) օգտապաշտական և գեղագիտական գործառույթներ.

արտադրանքն օգտագործող (սպառող)՝ իրավաբանական, ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր, որն սպառման համար ձեռք է բերում այնպիսի արտադրանք, որը դասվում է սույն Տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կարգավորման օբյեկտների շարքին.

սպորտային արտադրատեսակներ՝ սպորտի տարբեր տեսակների մրցույթների և մարզումների կազմակերպման և անցկացման համար անհրաժեշտ պայմաններն ապահովող արտադրատեսակներ.

կողմեր՝ Մաքսային միության անդամ պետությունների կառավարություններ.

արտադրանքի տիպային օրինակ՝ օրինակ, որը նպատակային կամ գործառական նշանակությամբ վերաբերում է արտադրանքի մի տեսակին, որը պատրաստված է մեկ պատրաստողի կողմից միատեսակ նյութերից միևնույն տեխնիկական փաստաթղթերով և ունի կիրառության միևնույն ոլորտը.

պատրաստողի կողմից լիազորված անձ՝ Մաքսային միության անդամ պետության կողմից սահմանված կարգով գրանցված իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը սահմանված է պատրաստողի կողմից նրա հետ կնքված պայմանագրի հիման վրա՝ արտադրանքի համապատասխանությունը հավաստելիս և Մաքսային միության անդամ պետությունների տարածքներում այն տեղաբաշխելիս իր անունից գործողություններ իրականացնելու համար, ինչպես նաև սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին արտադրանքի անհամապատասխանության համար պատասխանատվության ենթարկելու նպատակով.

քիմիական անվտանգություն՝ արտադրանքի այն վիճակը, որի դեպքում բացակայում է օգտագործողի (սպառողի) առողջությանը վնաս պատճառելու կամ կյանքը վտանգելու հետ կապված անթույլատրելի ռիսկը՝ օգտագործողի (սպառողի) առողջության համար վնասակար քիմիական նյութերի խտության մակարդակի գերազանցման պատճառով:

Այն դեպքում, երբ քիմիական անվտանգության ցուցանիշը սահմանված է «չի թույլատրվում», ապա պարտադիր է վնասակար նյութերի հայտնաբերման սահմանի նշումը՝ սանիտարաքիմիական ցուցանիշները վերահսկելու նպատակով կիրառման համար թույլատրելի չափումների կատարման մեթոդիկաներով:

Հոդված 3. Շուկայում շրջանառության կանոնները

1. Թեթև արդյունաբերության արտադրանքը շրջանառության մեջ է դրվում Մաքսային միության միասնական մաքսային տարածքում այն պայմանով, որ այն համապատասխանում է սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին, ինչպես նաև Մաքսային միության մյուս տեխնիկական կանոնակարգերին, որոնց գործողությունը տարածվում է դրա վրա, և այն պայմանով, որ այն անցել է համապատասխանության հավաստում՝ սույն Տեխնիկական կանոնակարգի 11-րդ հոդվածի համաձայն, ինչպես նաև Մաքսային միության այլ տեխնիկական կանոնակարգերի համաձայն, որոնց գործողությունը տարածվում է դրա վրա։

2. Թեթև արդյունաբերության այն արտադրանքը, որի համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին հավաստված չէ, չպետք է մակնշվի Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով, և չի թույլատրվում այն շուկայում շրջանառության մեջ դնել։

3. Արտադրանքի շուկայահանման և շուկայում դրա շրջանառության դեպքում պետք է տրամադրվեն դրա մասին ամբողջական և հավաստի տեղեկություններ մակնշման միջոցով՝ արտադրանքի անվտանգության վերաբերյալ օգտագործողներին (սպառողներին) մոլորության մեջ գցող գործողությունները կանխարգելելու նպատակով։

Հոդված 4. Թեթև արդյունաբերության արտադրանքի անվտանգության ընդհանուր պահանջները

1. Թեթև արդյունաբերության արտադրանքի անվտանգությունը գնահատվում է հետևյալ ցուցանիշներով՝

մեխանիկական (խզման բեռնվածք, ամրացման ամրություն, ճկունություն, հարվածային ամրություն).

քիմիական (այն վնասակար քիմիական նյութերի սահմանային թույլատրելի արտազատումն օդային և (կամ) ջրային միջավայր, որոնց ցանկը սահմանվում է՝ կախված նյութի քիմիական բաղադրությունից և (կամ) արտադրանքի նշանակությունից).

կենսաբանական (հիգրոսկոպիկություն, օդաթափանցելիություն, անջրանցիկություն, էլեկտրաստատիկ դաշտի լարում, թունավորության ինդեքս կամ տեղային, գրգռիչ ազդեցություն, ներկվածքի կայունություն)։

2. Մարդու մաշկի հետ շփվող արտադրատեսակների համար նյութերի, առաջին և երկրորդ շերտերի հագուստի, տնային, ամառային և լողափային, ինչպես նաև կոշիկի այլ տեսակների ներքին շերտերի՝ ջրային միջավայրում որոշվող թունավորության ինդեքսը պետք է կազմի 70-ից 120 տոկոսը ներառյալ, օդային միջավայրում՝ 80-ից 120 տոկոսը ներառյալ, կամ պետք է բացակայի մաշկի տեղային գրգռիչ ազդեցությունը։

3. Թեթև արդյունաբերության արտադրանքի և դրա արտադրության համար օգտագործվող նյութերի հոտի ուժգնությունը բնական պայմաններում չպետք է գերազանցի 2 բալը։

Հոդված 5. Մանածագործական նյութերի, դրանցից պատրաստված արտադրատեսակների, հագուստի, մանածագործական-գալանտերեային արտադրատեսակների անվտանգության պահանջները

1. Մանածագործական նյութերը, դրանցից պատրաստված արտադրատեսակները, հագուստը բնութագրվում են կենսաբանական և քիմիական անվտանգությամբ, որի ցուցանիշները սահմանվում են՝ կախված դրանց գործառական նշանակությունից և հումքային բաղադրությունից։

2. Կախված նշանակությունից և մարդու մարմնի հետ շփման մակերեսից՝ հագուստը և արտադրատեսակները բաժանվում են առաջին, երկրորդ ու երրորդ շերտի հագուստի և արտադրատեսակների։

Առաջին շերտի հագուստին և արտադրատեսակներին են դասվում մարդու մաշկի հետ անմիջական շփում ունեցող արտադրատեսակները, ինչպիսիք են՝ մարմնահագի և անկողնային սպիտակեղենը, կորսետային արտադրատեսակները և լողազգեստներ, ամառային գլխի հարդարանքները, գուլպեղենը, քթի թաշկինակները, թաշկինակային-շարֆային արտադրատեսակները և նույնանման այլ արտադրատեսակներ։

Երկրորդ շերտի հագուստին և արտադրատեսակներին են դասվում մարդու մաշկի հետ սահմանափակ շփում ունեցող արտադրատեսակները, ինչպիսիք են՝ շրջազգեստները, բլուզները, վերնաշապիկները, տաբատները, կիսաշրջազգեստները, առանց աստառ կոստյումները, սվիտերները, ջեմպերները, պուլովերները, գլխի հարդարանքները (բացի ամառայիններից), թաթմանները, ձեռնոցները, թաթպանները, ձմեռային տեսականու գուլպեղենը և նույնանման այլ արտադրատեսակներ։

Երրորդ շերտի հագուստին և արտադրատեսակներին են դասվում երկրորդ շերտի հագուստի վրայից հագնելու համար նախատեսված արտադրատեսակները, ինչպիսիք են՝ վերարկուները, կիսավերարկուները, բաճկոնները, անջրանցիկ վերարկուները, աստառով կոստյումները և նույնանման այլ արտադրատեսակներ։

3. Մանածագործական նյութերը, դրանցից պատրաստված արտադրատեսակները, հագուստը, մանածագործական-գալանտերեային արտադրատեսակները, ըստ կենսաբանական և քիմիական անվտանգությունը բնութագրող ցուցանիշների, պետք է համապատասխանեն սույն Տեխնիկական կանոնակարգի 2-րդ հավելվածում նշված նորմերին։

Մանածագործական նյութերից, դրանցից պատրաստված արտադրատեսակներից, հագուստից, մանածագործական-գալանտերեային արտադրատեսակներից վնասակար քիմիական նյութերի արտազատումը (միգրացիոն ցուցանիշներ) չպետք է գերազանցի սույն Տեխնիկական կանոնակարգի 2-րդ և 3-րդ հավելվածներում ներկայացված նորմերը:

Վերահսկվող նյութերի ցանկը որոշվում է՝ կախված նյութի քիմիական բաղադրությունից և արտադրատեսակի տեսակից՝

մանածագործական նյութերում, դրանցից պատրաստված արտադրատեսակներում, առաջին և երկրորդ շերտի հագուստում՝ ջրային միջավայրում.

մանածագործական նյութերում, դրանցից պատրաստված արտադրատեսակներում, երրորդ շերտի հագուստում, մանածագործական-գալանտերեային արտադրատեսակներում՝ օդային կամ ջրային միջավայրում:

Մանածագործական նյութերում, դրանցից պատրաստված արտադրատեսակներում, առաջին և երկրորդ շերտի հագուստում, մանածագործական-գալանտերեային արտադրատեսակներում որոշվում է այն ցնդող վտանգավոր քիմիական նյութերի քանակը, որոնց առկայությունը պայմանավորված է արտադրության ընթացքում մանածագործական-օժանդակ նյութերի կիրառմամբ: Այս դեպքում ցնդող քիմիական նյութերի արտազատումը չպետք է գերազանցի սույն Տեխնիկական կանոնակարգի 4-րդ հավելվածում նշված նորմերը:

Առաջին շերտի հագուստի և արտադրատեսակների համար մանածագործական նյութերի ներկվածքի կայունությունը լվացման և քրտինքի նկատմամբ պետք է լինի առնվազն 4 բալ, չոր շփման նկատմամբ՝ առնվազն 3 բալ:

Լողազգեստների և նույնանման արտադրատեսակների համար մանածագործական նյութերի ներկվածքի կայունությունը լվացման, քրտինքի և ծովի ջրի նկատմամբ պետք է լինի առնվազն 4 բալ:

Աստառի համար մանածագործական նյութերի ներկվածքի կայունությունը լվացման, քրտինքի, չոր շփման նկատմամբ պետք է լինի առնվազն 4 բալ:

Երկրորդ և երրորդ շերտերի հագուստի և այլ նշանակության արտադրատեսակների համար մանածագործական նյութերի ներկվածքի կայունությունը լվացման, քրտինքի, չոր շփման և թորած ջրի նկատմամբ պետք է լինի առնվազն 3 բալ՝ կախված ազդեցության նորմավորվող տեսակներից:

Բնական մուգ ներկանյութերով ներկված մուգ երանգի ջինսային գործվածքների համար թույլատրվում է ներկվածքի 1 բալով նվազեցում:

Ներկվածքի կայունությունը որոշելիս գնահատվում է միայն սպիտակ (կից) նյութի ներկվելը:

Հոդված 6. Կոշկեղենի, կաշվի, արհեստական կաշվի և կաշվե-գալանտերեային արտադրատեսակների անվտանգության պահանջներ

1. Կոշկեղենը բնութագրվում է մեխանիկական, կենսաբանական և քիմիական անվտանգության ցուցանիշներով:

2. Կոշկեղենի մեխանիկական և կենսաբանական անվտանգությունը որոշվում է հետևյալ բնութագրերով և պետք է համապատասխանի սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հավելվածում նշված նորմերին:

Մեխանիկական անվտանգությունը որոշվում է հետևյալ բնութագրերով՝

1) ներբանի և կոշիկի ներքևի հատվածի դետալների ամրակման ամրությունը,

2) կրունկի ամրացման ամրությունը,

3) ներբանի կայունությունը բազմակի ճկման նկատմամբ,

4) ներբանի հարվածային ամրությունը:

Կոշկեղենի կենսաբանական անվտանգությունը բնորոշվում է հետևյալ ցուցանիշներով՝ ճկունություն, անջրանցիկություն:

3. Կոշկեղենի քիմիական անվտանգությունը պետք է համապատասխանի սույն Տեխնիկական կանոնակարգի 3-րդ և 8-րդ հավելվածներում սահմանված պահանջներին:

Տնային, ամառային և լողափային կոշիկներից, ինչպես նաև մարդու մաշկի հետ շփվող (կոշիկի ներքին մակերևույթ) նյութեղենից նյութերի միգրացիայի վերահսկումը կատարվում է ջրային միջավայրում, կոշկեղենի և նյութեղենի մյուս տեսակներից՝ օդային միջավայրում:

Ձմեռային կոշիկներում պոլիուրեթանից ներբանը բանող մակերեսի վրա պետք է լինի ակոսավոր՝ սահումը կանխելու համար:

Թաղյա կոշիկներում ազատ ծծմբաթթվի զանգվածային մասը (ջրային լուծամզմամբ) պետք է լինի 0,7 տոկոսից ոչ ավելի:

4. Կաշվե-գալանտերեային արտադրատեսակների անվտանգությունը բնութագրվում է՝

1) մեխանիկական ցուցանիշներով՝ բռնակների, ուսագոտիների և արտադրատեսակների կորպուսը կրող կարերի ամրակման ամրությունը,

2) քիմիական բնութագրիչներով՝ վնասակար քիմիական նյութերի առավելագույն արտազատումը մոդելային օդային միջավայր,

3) կենսաբանական ցուցանիշներով՝ չոր և թաց շփման նկատմամբ արտադրատեսակների ներկվածքի կայունությունը:

Կաշվե-գալանտերեային արտադրատեսակների մեխանիկական և կենսաբանական անվտանգության ցուցանիշները պետք է համապատասխանեն սույն Տեխնիկական կանոնակարգի 6-րդ հավելվածում սահմանված պահանջներին:

Կաշվե-գալանտերեային արտադրատեսակների արտադրման ընթացքում կիրառվող

նյութեղենից արտադրվող վնասակար նյութերի արտազատման թույլատրելի առավելագույն նորմերը պետք է համապատասխանեն սույն Տեխնիկական կանոնակարգի 7-րդ և 8-րդ հավելվածներում սահմանված պահանջներին:

Կաշվե-գալանտերեային նյութեղենից վնասակար նյութերի արտազատման վերահսկումը կատարվում է օդային միջավայրում:

5. Կաշիները պետք է համապատասխանեն սույն Տեխնիկական կանոնակարգի 8-րդ հավելվածում սահմանված քիմիական և կենսաբանական անվտանգության պահանջներին:

Արհեստական կաշիները պետք է համապատասխանեն սույն Տեխնիկական կանոնակարգի 3-րդ հավելվածում սահմանված քիմիական անվտանգության պահանջներին և 8-րդ հավելվածում սահմանված կենսաբանական անվտանգության պահանջներին:

(6-րդ հոդվածը փոփ. ԵՏՀԽ 09.08.16 թիվ 60)

Հոդված 7. Մշակված կաշվից, մորթուց, մորթե մորթիկներից հագուստի և արտադրատեսակների անվտանգության պահանջները

Մշակված կաշվից, մորթուց, մորթե մորթիկներից հագուստի և արտադրատեսակների անվտանգությունը բնութագրվում է քիմիական և կենսաբանական անվտանգության ցուցանիշներով, որոնք պետք է համապատասխանեն սույն Տեխնիկական կանոնակարգի 8-րդ հավելվածում սահմանված պահանջներին:

Մորթուց ու կաշվից հագուստում և արտադրատեսակներում կիրառվող մանածագործական նյութերը պետք է համապատասխանեն մանածագործական նյութերի անվտանգության պահանջներին:

Հոդված 8. Մեխանիկական արտադրման գորգագործական ծածկերի և արտադրատեսակների, թաղիքի, նրբաթաղիքի և ոչ գործվածքային նյութերի և այդ նյութերից պատրաստի արտադրատեսակների անվտանգության պահանջները

Մեխանիկական արտադրման գորգագործական ծածկերի և արտադրատեսակների, թաղիքի, նրբաթաղիքի և ոչ գործվածքային նյութերի և այլ մանածագործական արտադրատեսակների անվտանգությունը պետք է համապատասխանի հետևյալ նորմերին՝

- հականեխիչով մշակվելուց հետո արտադրատեսակները չպետք է բորբոսի հոտ ունենան.
- արտադրատեսակի մակերեսի էլեկտրաստատիկ դաշտի լարվածության մակարդակը և ազատ ֆորմալդեհիդի պարունակությունը պետք է համապատասխանեն սույն Տեխնիկական կանոնակարգի 2–րդ հավելվածի պահանջներին.
- ներկվածքի կայունությունը պետք է լինի առնվազն 3 բալ.
- թաղիքե արտադրատեսակների համար՝ ջրային լուծամզմամբ ազատ ծծմբաթթվի զանգվածային մասը պետք է լինի 0,7 տոկոսից ոչ ավելի.
- քիմիական անվտանգության պահանջները պետք է համապատասխանեն սույն Տեխնիկական կանոնակարգի 3-րդ հավելվածի պահանջներին.
- վնասակար նյութերի միգրացիայի վերահսկումը կատարվում է օդային կամ ջրային միջավայրում:

(8-րդ հոդվածը խմբ., լրաց. ԵՏՀԽ 09.08.16 թիվ 60)

Հոդված 9. Արտադրանքի մակնշմանը ներկայացվող պահանջները

1. Արտադրանքի մականշվածքը պետք է լինի հավաստի, ընթեռնելի և զննման ու նույնականացման համար մատչելի: Մականշվածքը զետեղվում է արտադրանքի, արտադրատեսակին ամրացվող պիտակի կամ ապրանքանիշի, արտադրատեսակի փաթեթվածքի, արտադրատեսակների խմբի փաթեթվածքի կամ արտադրանքի թերթ-ներդիրի վրա:

Մականշվածքը պետք է պարունակի հետևյալ պարտադիր տեղեկությունները՝

- արտադրանքի անվանումը,
- պատրաստող երկրի անվանումը,
- պատրաստողի կամ վաճառողի, կամ պատրաստողի կողմից լիազորված անձի անվանումը,
- պատրաստողի կամ վաճառողի, կամ պատրաստողի կողմից լիազորված անձի իրավաբանական հասցեն,
- արտադրատեսակի չափը,
- հումքի բաղադրությունը,
- ապրանքային նշանը (առկայության դեպքում),
- Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը,
- պատրաստողի երաշխիքային պարտավորությունները (անհրաժեշտության դեպքում),
- պատրաստման ամսաթիվը,
- արտադրանքի խմբաքանակի համարը (անհրաժեշտության դեպքում):

2. Կախված թեթև արդյունաբերության արտադրանքի տեսակից և նշանակությունից՝ մականշվածքը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

Մանածագործական նյութերից հագուստի և արտադրատեսակների համար հավելյալ

տեղեկությունները պետք է պարունակեն՝
- արտադրատեսակի երեսային մասի և աստառի նյութում բնական և քիմիական հումքի տեսակն ու զանգվածային բաժինը (տոկոսային պարունակությունը): Հումքի փաստացի պարունակության շեղումը չպետք է գերազանցի + 5 տոկոսը,
- մոդելը,
- արտադրատեսակի խնամքի պայմանանշանները,
- շահագործման ընթացքում արտադրատեսակի խնամքի առանձնահատկությունների մասին ցուցումը (անհրաժեշտության դեպքում):

Տրիկոտաժե և մանածագործական պաստառների, դրանցից պատրաստված հատովի արտադրատեսակների, գորգերի, վերմակների, ծածկոցների, վարագույրների համար հավելյալ տեղեկությունները պետք է պարունակեն՝
- ելքային հումքի (գորգագործական ծածկերի և դրանցից պատրաստված արտադրատեսակների խավավոր մակերեսի) տեսակը և զանգվածային մասը (տոկոսային պարունակությունը): Ելքային հումքի տոկոսային պարունակությունը նշվում է որպես նորմատիվային արժեք՝ +/- 5 տոկոսի սահմաններում թույլատրելիությամբ (բացի ոչ գործվածքային նյութերից),
- կտորի զանգվածը նորմավորված խոնավության դեպքում (տրիկոտաժե պաստառների համար),
- ներկվածքի կայունությունը (տրիկոտաժե և մանածագործական պաստառների համար),
- վերջնամշակման տեսակը (առկայության դեպքում),
- արտադրանքի խնամքի պայմանանշանները:

Կոշկեղենի համար հավելյալ տեղեկությունները պետք է պարունակեն՝
- արտադրատեսակի մոդելը և (կամ) ապրանքատեսակը,
- կոշկերեսի, աստառի և կոշիկի ներքևի հատվածի պատրաստման համար օգտագործված նյութի տեսակը,
- կոշիկի խնամքի վերաբերյալ ցուցումը (անհրաժեշտության դեպքում):

Մորթուց հագուստի և արտադրատեսակների համար հավելյալ տեղեկությունները պետք է պարունակեն՝
- մորթու տեսակը և դրա մշակման տեսակը (ներկված կամ չներկված),
- արտադրատեսակի խնամքի պայմանանշանները,
- շահագործման ընթացքում արտադրատեսակի խնամքի վերաբերյալ ցուցումը (անհրաժեշտության դեպքում):

Կաշվե-գալանտերեային արտադրատեսակների համար լրացուցիչ տեղեկությունները պետք է պարունակեն՝
- երեսային մասի նյութի անվանումը,
- մոդելը,
- շահագործման վերաբերյալ հրահանգչական ցուցումները (անհրաժեշտության դեպքում):

Կաշիների համար հավելյալ տեղեկությունները պետք է պարունակեն՝
- կաշվի մակերեսը և զանգվածը,
- հաստությունը (անհրաժեշտության դեպքում),
- տարատեսակը:

Մորթե մորթիկների համար հավելյալ տեղեկությունները պետք է պարունակեն՝
- մորթու տեսակը,
- մշակման տեսակը,
- տարատեսակը, մակնիշը,
- մակերեսը և չափը:

3. Մականշվածքը և տեղեկությունները պետք է ներկայացվեն ռուսերենով կամ Մաքսային միության այն անդամ-պետության պետական լեզվով, որի տարածքում տվյալ արտադրատեսակն արտադրվում և իրացվում է սպառողին:

Ներմուծվող արտադրանքի համար թույլատրվում է այն երկրի անվանումը, որտեղ պատրաստված է արտադրանքը, պատրաստողի անվանումը և նրա իրավաբանական հասցեն նշել լատինատառ:

4. Չեն թույլատրվում «էկոլոգիապես մաքուր», «օրթոպեդիկ» նշումները և նույնանման այլ նշումներ՝ առանց համապատասխան հավաստումների:

(9-րդ հոդվածը խմբ. ԵՏՀԽ 09.08.16 թիվ 60)

Հոդված 10. Անվտանգության պահանջներին համապատասխանության ապահովումը

1. Թեթև արդյունաբերության արտադրանքի համապատասխանությունը սույն տեխնիկական կանոնակարգին ապահովվում է դրա անվտանգության պահանջների անմիջական կատարմամբ, կամ ստանդարտների ցանկում ընդգրկված ստանդարտների այն պահանջների կատարմամբ, որոնց կիրառման արդյունքում կամավոր հիմունքով ապահովվում է սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանումը:

Նշված ստանդարտների պահանջների կամավոր հիմունքով կատարումը վկայում է սույն Տեխնիկական կանոնակարգի անվտանգության պահանջներին համապատասխանության կանխավարկածի մասին:

2. Թեթև արդյունաբերության փորձարկումների (ուսումնասիրությունների) մեթոդները սահմանվում են ստանդարտացման ոլորտի այն փաստաթղթերում, որոնք ընդգրկված են

Ստանդարտացման ոլորտի փաստաթղթերի ցանկում, և որոնք պարունակում են փորձարկումների (ուսումնասիրությունների) և չափումների կանոններն ու մեթոդները, այդ թվում՝ նմուշառման կանոնները, որոնք անհրաժեշտ են սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջները կատարելու և արտադրանքի համապատասխանության գնահատումը (հավաստումը) իրականացնելու համար:

Հոդված 11. Արտադրանքի՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության հավաստումը

1. Նախքան շուկայում շրջանառության մեջ դնելը՝ թեթև արդյունաբերության արտադրանքը պետք է ենթարկվի սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության հավաստման պարտադիր ընթացակարգին, որն իրականացվում է համապատասխանության հայտարարագրման կամ սերտիֆիկացման ձևով:

Համապատասխանությունը հավաստելիս հայտատու կարող է լինել սահմանված կարգով գրանցված՝ պատրաստող (պատրաստողի կողմից լիազորված անձ) կամ վաճառող (մատակարար) հանդիսացող իրավաբանական անձը կամ որպես անհատ ձեռնարկատեր հանդես եկող ֆիզիկական անձը:

2. Համապատասխանության հավաստման համար անհրաժեշտ է նույնականացնել արտադրանքը:

Թեթև արդյունաբերության արտադրանքի նույնականացումն անցկացնում է՝

- պատրաստողը, պատրաստողի կողմից լիազորված անձը, վաճառողը (մատակարարը), որը հայտարարագրում է թեթև արդյունաբերության արտադրանքի համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին և այն շրջանառության մեջ դնում Մաքսային միության միասնական մաքսային տարածքում.
- սերտիֆիկացման (համապատասխանության գնահատման (հավաստման)) մարմինը՝ սերտիֆիկացման ենթակա թեթև արդյունաբերության արտադրանքի՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության հավաստման նպատակով:

Թեթև արդյունաբերության արտադրանքի նույնականացման համար օգտագործվում են զգայորոշման և (կամ) գործիքային մեթոդները:

- Զգայորոշման մեթոդի դեպքում թեթև արդյունաբերության արտադրանքը նույնականացնում են ըստ արտադրանքի անվանման և տեսակի (նշանակության), ինչպես նաև դրա բնութագրիչների՝ արտադրանքի որոշակի տեսակին բնորոշ հատկանիշներին և փաստաթղթերի ձևավորված փաթեթին նույնականության:

Այն դեպքում, երբ նույնականացման զգայորոշման մեթոդը արտադրանքի մասին հավաստի տեղեկություններ չի ապահովում, կիրառվում է գործիքային մեթոդը: Նույնականացման գործիքային մեթոդի դեպքում թեթև արդյունաբերության արտադրանքի փորձարկումներն անցկացվում են Ստանդարտացման ոլորտի այն փաստաթղթերի հաստատված ցանկին համապատասխան, որոնք պարունակում են փորձարկումների (ուսումնասիրությունների) և չափումների կանոնները ու մեթոդները, այդ թվում՝ նմուշառման կանոնները, որոնք անհրաժեշտ են սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջները կիրառելու ու կատարելու և արտադրանքի համապատասխանության գնահատումը (հավաստումը) իրականացնելու համար:

3. Թեթև արդյունաբերության արտադրանքի՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության հայտարարագրումն անցկացվում է սույն Տեխնիկական կանոնակարգի 1-ին աղյուսակում ներկայացված սխեմաների օգտագործմամբ:

3.1. 3h, 4h, 6h սխեմաներով համապատասխանության հայտարարագրումն իրականացվում է արտադրանքի հետևյալ խմբերի համար՝

- 2-րդ և 3-րդ շերտերի հագուստ ու արտադրատեսակներ,
- տրիկոտաժե պաստառներ,
- սպիտակեղենի, հագուստի, սրբիչային գործվածքներ և նյութեր,
- կաշվից և մորթուց հագուստ և արտադրատեսակներ,
- 2-րդ շերտի գուլպեղեն,
- գլխի հարդարանքներ,
- կոշկեղեն՝ բացի թաղիքե կոշիկներից,
- մեխանիկական արտադրման գորգագործական ծածկեր և արտադրատեսակներ,
- սպիտակեղեն՝ ճաշասենյակի և խոհանոցի, թաշկինակներ.
- սրբիչներ, սավաններ՝ լողանալու համար նախատեսված.
- թաշկինակային-շարֆային արտադրատեսակներ:

1h, 2h սխեմաներով համապատասխանության հայտարարագրումն իրականացվում է այն արտադրանքի համար, որը ներառված չէ 3h, 4h, 6h սխեմաներով համապատասխանության հայտարարագրման ենթակա արտադրանքի խմբում և սերտիֆիկացման ենթակա արտադրանքի խմբում:

Համապատասխանության հայտարարագրման նպատակով փորձարկումներն անցկացվում են՝

- հայտատուի ընտրությամբ՝ սեփական փորձարկման լաբորատորիայում կամ Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում ընդգրկված հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում), կամ Մաքսային միության անդամ պետության տարածքում դրա

օրենսդրությանը համապատասխան գրանցված այլ փորձարկման լաբորատորիայում (1h, 2h սխեմաներ).

- Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում ներառված փորձարկման հավատարմագրված լաբորատորիայում (կենտրոնում) (3h, 4h, 6h սխեմաներ):

3.2. Թեթև արդյունաբերության արտադրանքի համապատասխանության հայտարարագրման ընթացքում պատրաստողը (պատրաստողի կողմից լիազորված անձը), վաճառողը (մատակարարը) իրականացնում է հետևյալ գործողությունները՝

3.2.1. Պատրաստողը (պատրաստողի կողմից լիազորված անձը), վաճառողը (մատակարարը)՝

- կազմում է թեթև արդյունաբերության արտադրանքի սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի փաթեթը, որն ընդգրկում է՝

այն փաստաթղթերի պատճենները, որոնցով հաստատվում է, որ հայտատուն սահմանված կարգով գրանցված է Մաքսային միության անդամ-պետության կողմից՝ որպես իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր.

թեթև արդյունաբերության արտադրանքի նմուշների (արտադրանքի տիպային նմուշների) փորձարկման արձանագրությունները, որոնցով հաստատվում է դրա համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին (գործողության ժամկետը՝ ոչ ավելի, քան 3 տարի), կամ նյութերի և կոմպլեկտավորող արտադրատեսակների փորձարկման արձանագրությունները, եթե պատրաստի արտադրանքի անվտանգության պահանջների կատարումն ապահովվում է տվյալ նյութերի և կոմպլեկտավորող արտադրատեսակների անվտանգության պահանջների կատարմամբ: Պայմանավորված համապատասխանության հայտարարագրման սխեմաներով՝ փորձարկումները պետք է անցկացվեն հայտատուի ընտրությամբ՝ սեփական փորձարկման լաբորատորիայում կամ Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում ընդգրկված հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում, կամ Մաքսային միության անդամ պետության տարածքում դրա օրենսդրությանը համապատասխան գրանցված այլ փորձարկման լաբորատորիայում (1h, 2h սխեմաներ) կամ Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում ընդգրկված հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (3h, 4h, 6h սխեմաներ).

արտադրության որակի կառավարման համակարգի վերաբերյալ համապատասխանության սերտիֆիկատի պատճենը (6h սխեմա).

շահագործման փաստաթղթերը, տեխնիկական և կոնստրուկտորական փաստաթղթերը, հումքի, նյութերի և կոմպլեկտավորող արտադրատեսակների մասին տեղեկությունները (նշված փաստաթղթերի առկայության դեպքում).

թեթև արդյունաբերության արտադրանքի ծագումը հավաստող փաստաթղթերի պատճենները, պայմանագիրը (մատակարարման պայմանագիրը) և ապրանքաուղեկից փաստաթղթերը (արտադրանքի խմբաքանակի համար) (2h, 4h սխեմաներ).

- անցկացնում է թեթև արդյունաբերության արտադրանքի նույնականացումը՝ սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն:

Արտադրանքի նմուշների (արտադրանքի տիպային նմուշների) փորձարկումների արձանագրությունը պետք է պարունակի՝

- արձանագրությունը կազմելու ամսաթիվը և համարը՝ փորձարկման լաբորատորիայում ընդունված համակարգին համապատասխան,
- փորձարկման լաբորատորիայի անվանումը կամ հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի անվանումը և գրանցման համարը (կախված հայտարարագրման սխեմայից),
- փորձարկման սարքավորումների ցանկը,
- փորձարկումների անցկացման պայմանները,
- արտադրանքի անվանումը,
- արտադրանքի հատկությունների ստուգվող ցուցանիշների անվանումը և փաստացի նշանակությունները,
- փորձարկումների կիրառված մեթոդների վերաբերյալ նորմատիվ փաստաթղթերի համարները և անվանումները:

3.2.2. Պատրաստողը՝

- իրականացնում է արտադրական հսկողություն և ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի արտադրության ընթացքն ապահովի թեթև արդյունաբերության արտադրանքի համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին (1h, 3h, 6h սխեմաներ).
- ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի արտադրության ընթացքը և արտադրանքի որակի կառավարման համակարգի կայուն գործունեությունը ապահովեն թեթև արդյունաբերության արտադրանքի համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին (6h սխեմա):

3.2.3. Պատրաստողը (պատրաստողի կողմից լիազորված անձը), վաճառողը (մատակարարը) ընդունում է թեթև արդյունաբերության արտադրանքի՝ սույն Տեխնիկական կանոնակարգին համապատասխանության մասին գրավոր հայտարարագիրը՝ Մաքսային

միության հանձնաժողովի կողմից հաստատված միասնական ձևով, և զետեղում է Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը:

3.3. Համապատասխանության մասին հայտարարագիրը ենթակա է գրանցման՝ Մաքսային միության հանձնաժողովի կողմից սահմանված կարգին համապատասխան:

3.4. Սերիական թողարկման՝ թեթև արդյունաբերության արտադրանքի համապատասխանության մասին հայտարարագրի գործողության ժամկետը 5 տարուց ոչ ավելի է, թեթև արդյունաբերության արտադրանքի խմբաքանակի համար համապատասխանության մասին հայտարարագրի գործողության ժամկետ չի սահմանվում:

Հայտատուի ցանկությամբ 1h և 2h սխեմաներով համապատասխանության հայտարարագրումը կարող է փոխարինվել համապատասխանության հայտարարագրման 3h, 4h, 6h սխեմաներով կամ սերտիֆիկացմամբ:

Հայտատուի ցանկությամբ 3h, 4h, 6h սխեմաներով համապատասխանության հայտարարագրումը կարող է փոխարինվել սերտիֆիկացմամբ.

4. Թեթև արդյունաբերության արտադրանքի՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության հավաստումը սերտիֆիկացման ձևով կատարվում է սույն Տեխնիկական կանոնակարգի 2-րդ աղյուսակում ներկայացված սերտիֆիկացման սխեմաներով՝ արտադրանքի հետևյալ խմբերի համար՝

- մարմնահագի սպիտակեղեն, կորսետային արտադրատեսակներ, լողանալու համար նախատեսված արտադրատեսակներ.
- անկողնային սպիտակեղեն,
- առաջին շերտի գուլպեղեն:

4.1. Թեթև արդյունաբերության արտադրանքի սերտիֆիկացումն անցկացնում է Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում ներառված սերտիֆիկացման (համապատասխանության գնահատման (հավաստման)) հավատարմագրված մարմինը (այսուհետ՝ սերտիֆիկացման մարմին):

4.2. Սերտիֆիկացման նպատակով փորձարկումներն անցկացնում է Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում ներառված հավատարմագրված փորձարկման լաբորատորիան (կենտրոնը) (այսուհետ՝ հավատարմագրված փորձարկման լաբորատորիա):

4.3. Թեթև արդյունաբերության արտադրանքի սերտիֆիկացման համար պատրաստողը (պատրաստողի կողմից լիազորված անձը), վաճառողը (մատակարարը) սերտիֆիկացման մարմին է ներկայացնում փաստաթղթերի փաթեթ, որը ներառում է՝

- արտադրանքի նմուշների (արտադրանքի տիպային նմուշների) փորձարկումների այն արձանագրությունները (գործողության ժամկետը՝ 3 տարուց ոչ ավելի), որոնք հավաստում են սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանությունն ըստ անվտանգության ցուցանիշների (առկայության դեպքում).

արտադրանքի պատրաստման ժամանակ օգտագործված նյութերի և կոմպլեկտավորող արտադրատեսակների փորձարկման արձանագրությունները (առկայության դեպքում).

- շահագործման փաստաթղթերը, տեխնիկական և կոնստրուկտորական փաստաթղթերը, հումքի, նյութերի և կոմպլեկտավորող արտադրատեսակների մասին տեղեկությունները (նշված փաստաթղթերի առկայության դեպքում).
- թեթև արդյունաբերության արտադրանքի արտադրության որակի կառավարման համակարգի (2u սխեմա) համապատասխանության սերտիֆիկատի պատճենը.
- թեթև արդյունաբերության արտադրանքի ծագումը հավաստող փաստաթղթերի պատճենները, պայմանագիրը (մատակարարման պայմանագիրը) և ապրանքաուղեկից փաստաթղթերը (արտադրանքի խմբաքանակի համար) (3u սխեմա);
- արտադրանքի անվտանգությունը հավաստող այլ փաստաթղթեր (հայտատուի հայեցողությամբ):

Թեթև արդյունաբերության արտադրանքի նմուշների (արտադրանքի տիպային նմուշների) փորձարկումների արձանագրությունը պետք է պարունակի՝

- արձանագրությունը կազմելու ամսաթիվը և համարը՝ փորձարկման լաբորատորիայում ընդունված համակարգին համապատասխան,
- փորձարկման լաբորատորիայի անվանումը կամ հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի անվանումը և գրանցման համարը (կախված հայտարարագրման սխեմայից),
- փորձարկման սարքավորումների ցանկը,
- փորձարկումների անցկացման պայմանները,
- արտադրանքի անվանումը,
- արտադրանքի հատկությունների ստուգվող ցուցանիշների անվանումը և փաստացի նշանակությունները,
- փորձարկումների կիրառված մեթոդների վերաբերյալ նորմատիվ փաստաթղթերի համարները և անվանումները:

4.4. Պատրաստողը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի արտադրության գործընթացը լինի կայուն և ապահովի պատրաստվող արտադրանքի համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին (1u սխեմա), ինչպես նաև ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կառավարման համակարգի կայուն

գործունեությունն ապահովելու համար (2ս սխեմա):

4.5. Սերտիֆիկացման մարմինը՝

- անցկացնում է թեթև արդյունաբերության արտադրանքի նույնականացումը՝ սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն.

- իրականացնում է նմուշառումը և կազմակերպում արտադրանքի նմուշների՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության վերաբերյալ փորձարկումների անցկացումը.

- անցկացնում է արտադրության վիճակի վերլուծություն (1ս սխեմա).

- փորձարկումների արդյունքների քննարկման և արտադրության վիճակի վերլուծության հիման վրա որոշում է կայացնում սերտիֆիկատ տրամադրելու հնարավորության կամ դրա տրամադրումը մերժելու մասին (սխեմա 1ս).

- տրամադրում է համապատասխանության սերտիֆիկատ՝ Մաքսային միության հանձնաժողովի կողմից հաստատված միասնական ձևով:

4.6. Սերիական թողարկման՝ թեթև արդյունաբերության արտադրանքի համար համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետը 5 տարուց ոչ ավելի է, թեթև արդյունաբերության արտադրանքի խմբաքանակի համար սերտիֆիկատի գործողության ժամկետ չի սահմանվում:

4.7. Պատրաստողը (պատրաստողի կողմից լիազորված անձը), վաճառողը (մատակարարը)՝

- զետեղում է Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը,

- համապատասխանության հավաստման ընթացակարգերի ավարտից հետո թեթև արդյունաբերության արտադրանքի փաստաթղթերի փաթեթում ներառում է՝

փորձարկումների արձանագրությունը (արձանագրությունները),

արտադրության վիճակի վերլուծության արդյունքները (1ս սխեմա),

համապատասխանության սերտիֆիկատը:

4.8. Սերտիֆիկացման մարմինն անցկացնում է տեսչական հսկողություն թեթև արդյունաբերության սերտիֆիկացված արտադրանքի նկատմամբ՝ փորձարկման հավատարմագրված լաբորատորիայում նմուշների փորձարկումներ և (կամ) արտադրության վիճակի վերլուծություն անցկացնելու միջոցով:

Հավատարմագրված փորձարկման լաբորատորիան անցկացնում է փորձարկումներ և կազմում արտադրանքի այն նմուշների փորձարկումների վերաբերյալ արձանագրություն, որոնք տրամադրվել են տեսչական հսկողության համար:

Տեսչական հսկողության պարբերականությունը՝ տարին 1 անգամ է:

5. Թեթև արդյունաբերության արտադրանքի վերաբերյալ փաստաթղթերի փաթեթը պետք է պահպանվի Մաքսային միության անդամ-պետության տարածքում՝

սերիական թողարկման արտադրանքի համար՝ պատրաստողի (պատրաստողի կողմից լիազորված անձի) մոտ՝ թեթև արդյունաբերության արտադրանքը արտադրությունից հանելու (արտադրությունը դադարեցնելու) օրվանից՝ առնվազն 5 տարվա ընթացքում,

արտադրանքի խմբաքանակի համար՝ վաճառողի (մատակարարի), պատրաստողի (պատրաստողի կողմից լիազորված անձի) մոտ՝ խմբաքանակի վերջին արտադրատեսակի իրացման օրվանից՝ առնվազն 5 տարվա ընթացքում, և տրամադրվի պետական հսկողության մարմիններին՝ նրանց պահանջով:

Աղյուսակ 1

Համապատասխանության հայտարարագրման սխեմաներ

Սխեմայի համարը	Սխեմայի տարրը			Կիրառումը	Համապա-տասխա-նությունը հավաստող փաստաթուղթը
	Արտադրանքի փորձարկումներ, տեսակի ուսումնասիրություն	Արտադրանքի գնահատում	Արտադրական հսկողություն		
1Հ	Արտադրանքի նմուշների փորձարկումներն իրականացնում է պատրաստողը	-	Արտադրական հսկողությունն իրականացնում է պատրաստողը	Սերիական թողարկման արտադրանքի համար Հայտատու՝ Մաքսային միության անդամ-պետության պատրաստող կամ օտարերկրյա պատրաստողի կողմից լիազորված	Սերիական թողարկման արտադրանքի համապա-տասխանության մասին հայտարարագիր

				անձ՝ Մաքսային միության միասնական մաքսային տարածքում	
2Հ	Արտադրանքի խմբաքանակի փորձարկումներն իրականացնում է հայտատուն	-	-	Արտադրանքի խմբաքանակի համար Հայտատու՝ Մաքսային միության անդամ-պետության պատրաստող, ներմուծող, վաճառող (մատակարար) կամ օտարերկրյա պատրաստողի կողմից լիազորված անձ՝ Մաքսային միության միասնական մաքսային տարածքում	Արտադրանքի խմբաքանակի համապա-տասխանության մասին հայտարարագիր
3Հ	Արտադրանքի նմուշների փորձարկումները փորձարկման հավատարմագրված լաբորատորիայում (կենտրոնում)	-	Արտադրական հսկողությունն իրականացնում է պատրաստողը	Սերիական թողարկման արտադրանքի համար Հայտատու՝ Մաքսային միության անդամ-պետության պատրաստող կամ օտարերկրյա պատրաստողի կողմից լիազորված անձ՝ Մաքսային միության միասնական մաքսային տարածքում	Սերիական թողարկման արտադրանքի համապա-տասխանության մասին հայտարարագիր
4Հ	Արտադրանքի խմբաքանակի փորձարկումները փորձարկման հավատարմագրված լաբորատորիայում (կենտրոնում)	-	-	Արտադրանքի խմբաքանակի համար Հայտատու՝ Մաքսային միության անդամ-պետության պատրաստող, ներմուծող, վաճառող (մատակարար) կամ օտարերկրյա պատրաստողի կողմից լիազորված անձ՝	Արտադրանքի խմբաքանակի համապա-տասխանության մասին հայտարարագիր

				Մաքսային միության միասնական մաքսային տարածքում	
6Հ	Արտադրանքի նմուշների փորձարկումները փորձարկման հավատարմագրված լաբորատորիայում (կենտրոնում)	Կառավարման համակարգի սերտիֆիկացում և տեսչական հսկողություն՝ կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմնի կողմից	Արտադրական հսկողությունն իրականացնում է պատրաստողը	Սերիական թողարկման արտադրանքի համար Հայտատու՝ Մաքսային միության անդամ-պետության պատրաստող կամ օտարերկրյա պատրաստողի կողմից լիազորված անձ՝ Մաքսային միության միասնական մաքսային տարածքում	Սերիական թողարկման արտադրանքի համապա-տասխանության մասին հայտարարագիր

Աղյուսակ 2

Համապատասխանության սերտիֆիկացման սխեմաներ

Սխեմայի համարը	Սխեմայի տարրը			Կիրառումը	Համապա-տասխա-նությունը հավաստող փաստաթուղթը
	Արտադրանքի փորձարկումներ	Արտադրանքի գնահատում	Տեսչական հսկողություն		
1Ս	Արտադրանքի նմուշների փորձարկումներ	Արտադրանքի վիճակի վերլուծություն	Արտադրանքի նմուշների փորձարկումներ և (կամ) արտադրության վիճակի վերլուծություն	Սերիական թողարկման արտադրանքի համար Հայտատու՝ պատրաստող, այդ թվում՝ օտարերկրյա, Մաքսային միության միասնական մաքսային տարածքում պատրաստողի կողմից լիազորված անձի առկայության դեպքում	Սերիական թողարկման արտադրանքի համապա-տասխանության սերտիֆիկատ
2Ս	Արտադրանքի նմուշների փորձարկումներ	Կառավարման համակարգի սերտիֆիկացում	Արտադրանքի նմուշների փորձարկումներ և կառավարման համակարգի հսկողություն		
3Ս	Արտադրանքի նմուշների փորձարկումներ	-	-	Արտադրանքի խմբաքանակի համար Հայտատու՝ վաճառող (մատակարար), պատրաստող, այդ թվում՝ օտարերկրյա	Արտադրանքի խմբաքանակի համապա-տասխանության սերտիֆիկատ

(11-րդ հոդվածը լրաց., խմբ., փոփ. ԵՏՀԽ 09.08.16 թիվ 60)

Հոդված 12. Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշումը

1. Սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանող և համապատասխանության հավաստման ընթացակարգն անցած թեթև արդյունաբերության արտադրանքը պետք է ունենա Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշվածք:

2. Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշումը կատարվում է մինչև արտադրանքը շուկայում շրջանառության մեջ դնելը:

3. Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը զետեղվում է պարզ ու հստակ պատկեր ապահովող ցանկացած եղանակով:

Թեթև արդյունաբերության արտադրանքը Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշվում է դրա՝ Մաքսային միության բոլոր այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանելու դեպքում, որոնց գործողությունը տարածվում է դրա վրա և որոնցով նախատեսվում է տվյալ նշանի զետեղումը:

4. Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը կարող է զետեղվել փաթեթվածքի, ներդիրի, պիտակի վրա կամ ներկայացվել արտադրանքին կից փաստաթղթերում:

Հոդված 13. Պաշտպանության մասով վերապահումը

1. Սույն Տեխնիկական կանոնակարգի և Մաքսային միության՝ տվյալ արտադրանքին ներկայացվող պահանջներ սահմանող այլ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին չհամապատասխանող, և առանց համապատասխանության գնահատման (հավաստման) փաստաթղթերի շրջանառության մեջ դրվող կամ գտնվող և (կամ) առանց Մաքսային միության անդամ պետությունների շուկայում շրջանառության միասնական նշանի մակնշման շրջանառության մեջ գտնվող թեթև արդյունաբերության արտադրանք հայտնաբերելիս Մաքսային միության անդամ պետության լիազորված մարմինները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցները՝ Մաքսային միության միասնական մաքսային տարածքում այդ արտադրանքը շրջանառության մեջ դնելը սահմանափակելու, արգելելու, ինչպես նաև սույն Տեխնիկական կանոնակարգի և տվյալ արտադրանքին ներկայացվող պահանջները սահմանող՝ Մաքսային միության այլ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին չհամապատասխանող արտադրանքը շուկայից հանելու համար:

2. Մաքսային միության անդամ պետության լիազորված մարմինը պարտավոր է տեղեկացնել Մաքսային միության հանձնաժողովին և Մաքսային միության մյուս անդամ պետությունների լիազորված մարմիններին ընդունված որոշման մասին՝ նշելով տվյալ որոշումն ընդունելու պատճառները և տրամադրելով տվյալ միջոցը ձեռնարկելու անհրաժեշտությունը պարզաբանող ապացույցներ:

Հավելված 1
«Թեթև արդյունաբերության արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 017/2011)

Այն արտադրանքի ցանկը, որի համար սահմանվում են սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջները

Արտադրանքի խմբերի անվանումը	Արտադրատեսակների անվանումը
1	2
Նյութեր՝ մանածագործական	
- սպիտակեղենային	անկողնային, մարմնահագի, ճաշասենյակի սպիտակեղենի, սպիտակեղենային, կորսետային և լողանալու համար նախատեսված
- սրբիչային	(լողանալու համար նախատեսված), հարթ, ժակարդային, վաֆլենման, խավավոր սրբիչների, սավանների համար
- հագուստի	անջրանցիկ վերարկուի ու բաճկոնի, վերարկուի, կոստյումի, զգեստային-կոստյումի, զգեստային, բլուզային, վերնաշապկի, թաշկինակի և աստառի
- կոշկեղենի	կոշկերեսի և կոշիկի աստառի համար
- դեկորատիվ	պատուհանի վարագույրների, դռան վարագույրների, գալարավարագույրների, ծածկոցների, սփռոցների, թիկնոցների, ուղեգորգերի, շեզլոնգների համար
- կահույքի	կահույքի երեսծածկոցների, ներքնակների համար, ծածկաշապկի

- մորթի՝ արհեստական և գործվածքներ՝ խավավոր	դեկորատիվ նշանակության վրայի արտադրատեսակների, օձիքների, զարդարանքների, աստառի, գլխի հարդարանքների համար, այդ թվում՝ ծածկոցաշալերը
Հագուստ և արտադրատեսակներ՝ կարի և տրիկոտաժե՝	
- արտադրատեսակներ՝ վրայի	ժակետներ, ջեմպեր, բաճկոններ, ժիլետներ, կոստյումներ, բլուզներ, կիսաշրջազգեստներ, զգեստներ, սարաֆաններ, կիսատաբատներ, կոմպլեկտներ, խալաթներ, տաբատներ, կոմբինեզոններ, ռեյտուզներ, սպորտային կոստյումներ և տաբատներ (բացի սպորտային թիմերի հանդերձավորման համար նախատեսվածներից) և նույնանման այլ արտադրատեսակներ
- գուլպեղեն	զուգագուլպաներ, գուլպաներ, կիսագուլպաներ, զանկապաններ, կարճագուլպաներ, լեգինսներ, կյուլոտներ, ոտնաթաթագուլպաներ և նույնանման այլ արտադրատեսակներ
- արտադրատեսակներ՝ ձեռնոցային	ձեռնոցներ, թաթպաններ, թաթմաններ և նույնանման այլ արտադրատեսակներ
- արտադրատեսակներ՝ թաշկինակային-շարֆային	շարֆեր, թաշկինակներ, գլխաշորեր
- վերնազգեստ	վերարկուներ, կիսավերարկուներ, անջրանցիկ վերարկուներ, կուրտկաներ, սպորտային կուրտկաներ (տաբատներ, կոստյումներ), կոմբինեզոններ, կիսակոմբինեզոններ և նույնանման այլ արտադրատեսակներ
- վերնաշապիկներ	վերնաշապիկներ
- արտադրատեսակներ՝ կոստյումային	կոստյումներ, պիջակներ, ժակետներ, կիսաշրջազգեստներ, ժիլետներ, պիջականման կուրտկաներ, տաբատներ, կիսատաբատներ և նույնանման այլ արտադրատեսակներ
- արտադրատեսակներ՝ զգեստային	զգեստներ (ներառյալ սարաֆանները, խալաթները), կիսաշրջազգեստներ, բլուզներ, ժիլետներ, գոգնոցներ, տաբատային կոմպլեկտներ և նույնանման այլ արտադրատեսակներ
- հագուստ՝ տնային	խալաթներ, կոստյումներ և նույնանման այլ արտադրատեսակներ
- արտադրատեսակներ՝ սպիտակեղենային	մարմնահագի սպիտակեղեն, անկողնային, ճաշասենյակի և խոհանոցի սպիտակեղեն, սրբիչներ, լողանալու համար նախատեսված արտադրատեսակներ, քթի թաշկինակներ և նույնանման այլ արտադրատեսակներ
- արտադրատեսակներ՝ կորսետային	կրծկալներ, կորսետներ և նույնանման այլ արտադրատեսակներ
- անկողնային պարագաներ	վերմակներ, բարձեր և նույնանման այլ արտադրատեսակներ
- գլխի հարդարանքներ	ֆուրաժկաներ, կեպիներ, գդակներ, գլխարկներ, պանամաներ, բերետներ, տյուբետեյկաներ և նույնանման այլ արտադրատեսակներ
Ծածկեր և արտադրատեսակներ՝ գորգագործական, մեքենայական արտադրության	գորգեր, ուղեգորգեր, հատակի ուղեգորգեր, հատակի մանածագործական ծածկեր
Արտադրատեսակներ՝ մանածագործական-գալանտերեային	արտադրատեսակներ՝ վարագույրի - շղարշե, քաթան՝ ժանյակավոր և արտադրատեսակներ՝ ժանյակավոր, արտադրատեսակներ՝ հատով, փողկապներ, թիկնոցներ, ծածկոցներ, գալարավարագույրներ և նույնանման այլ արտադրատեսակներ
Արտադրատեսակներ՝	պայուսակներ, ճամպրուկներ, պորտֆելներ,

կաշվե-գալանտերեային	թիկնապայուսակներ, ուղեպայուսակներ, պորտպլեդներ, պատյաններ, թղթապանակներ և նույնանման այլ արտադրատեսակներ
	ձեռնոցներ, թաթմաններ
	գոտեփոկեր, ժամացույցի համար փոկեր և նույնանման այլ արտադրատեսակներ
Թաղիք, նրբաթաղիք և ոչ գործվածքային նյութեր	թաղիք, նրբաթաղիք և ոչ գործվածքային նյութեր
Կոշկեղեն	երկարաճիտ կոշիկներ, կիսաճտքավոր կոշիկներ, թեթև ճտքավոր կոշիկներ, կարճաճիտք կոշիկներ, ճտքակոշիկներ, կիսակոշիկներ, տուֆլիներ, կրկնակոշիկներ և բնական, արհեստական ու սինթետիկ կաշվից կոշիկների, ռետինե, ռետինե-մանածագործական, թաղիքե, կոմբինացված, մանածագործական, պոլիմերային և այլ նյութերից կոշիկների այլ տեսակներ
Կաշի՝ արհեստական	կոշկերեսի և կոշիկի աստառի, հագուստի և գլխի հարդարանքների, ձեռնոցների և թաթմանների համար, գալանտերեային, կահույքի և տարբեր արտադրատեսակների երեսքաշման համար
Կաշի և կաշվե արտադրատեսակներ	կաշի՝ արտադրատեսակների ներքևի, վերևի մասի և աստառի համար, գալանտերեային, ձեռնոցների և թաթմանների համար, կահույքի երեսքաշման համար և կաշվի այլ տեսակներ,
	հագուստ, գլխի հարդարանքներ և կաշվե այլ արտադրատեսակներ
Մորթի և մորթե արտադրատեսակներ	վերարկուներ, կիսավերարկուներ, կուրտկաներ, թիկնոցներ, կոստյումներ, ժիլետներ, գլխի հարդարանքներ, օձիքներ, մանժետներ, զարդարանքներ, հարդարանքներ, ձեռնոցներ, թաթմաններ, գուլպաներ, կարճագուլպաներ, ննջապարկեր, ծածկոցներ և նույնանման այլ արտադրատեսակներ,
	մորթե մորթիկներ՝ մշակված

Հավելված 2
«Թեթև արդյունաբերության արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 017/2011)

Մանածագործական նյութերին, արտադրատեսակներին և դրանցից պատրաստված հագուստին, մանածագործական-գալանտերեային արտադրատեսակներին ներկայացվող կենսաբանական և քիմիական անվտանգության պահանջները

Արտադրանքի անվանումը	Հիգրոսկոպ-պիկություն*, (%), ոչ պակաս	**Օդաթափան-ցելիություն** դմ³/մ²ս, ոչ պակաս**	Արտադրա-տեսակների մակերևույ-թին էլեկտրա-ստատիկ դաշտի լարվածու-թյան մակարդակը, կՎ/մ, ոչ ավելի	Ազատ ֆորմալդե-հիդի պարունա-կությունը, մկգ/գ, ոչ ավելի
1	2	3	4	5
Նյութեր առաջին շերտի արտադրատեսակների և հագուստի համար, սպիտակեղենային արտադրատեսակներ, անկողնային սպիտակեղեն, կորսետային և	6	100	15	75
	Լողանալու համար նախատեսված, կորսետային արտադրատեսակների, գուլպեղենի և թաշկինակային-շարֆային արտադրատեսակների	Թույլատրվում է 70-ից ոչ պակաս՝ ֆլանելից, բումազեից, ներպատված (խավավորված) արտադրա-տեսակների,		

լողանալու համար նախատեսված արտադրատեսակներ, գլխի ամառային հարդարանքներ, գուլպեղեն, թաշկինակային-շարֆային արտադրատեսակներ, քթի թաշկինակներ և նույնանման այլ արտադրատեսակներ	համար՝ չի սահմանվում	տրիկոտաժե պաստառների և պոլիուրեթանային թելերով պաստառների, անկողնային սպիտակեղենի համար		
Նյութեր երկրորդ շերտի արտադրատեսակների և հագուստի համար, զգեստներ, բլուզներ, վերնաշապիկներ, տաբատներ, կիսաշրջազգեստներ, առանց աստառի կոստյումներ, սվիտերներ, ջեմպերներ, պուլովերներ, գլխի հարդարանքներ (ամառայիններից բացի), ձմեռային տեսականու գուլպեղեն, ձեռնոցներ, թաթպաններ և նույնանման այլ արտադրատեսակներ	Չի սահմանվում	60	15	300
		100՝ մանածագործական արտադրատե-սակների համար. Թույլատրվում է 60-ից ոչ պակաս՝ ֆլանելից, (խավավորված) տրիկոտաժե պաստառներից ու պոլիուրեթանային և թելերով պաստառներից արտադրա-տեսակների համար		
		ջինսի և վելվետի գործվածքներից, ջինսի գործվածքների նման վուշե բամբակացված գործվածքներից արտադրատե-սակների համար՝ 50-ից ոչ պակաս		
Երրորդ շերտի հագուստի և արտադրատեսակ-ների համար, վերարկուներ, կիսավերարկուներ, անջրանցիկ վերարկուներ, կուրտկաներ, աստառով կոստյումներ և նույնանման այլ արտադրատեսակ-ներ	-	60 (միայն աստառի համար)	15	300
		-	15	75
Սրբիչներ, սավաններ՝ լողանալու համար նախատեսված	Ջրակլանումը 80%-ից ոչ պակաս՝ վուշե գործվածքների համար			
	300%-ից ոչ պակաս՝ բամբակյա և խառնած խավավոր գործվածքների համար			
	Մազականությունը վաֆլենման, բամբակյա և խառնակազմ սրբիչների համար՝ 80 մմ 30 րոպեում:			
Մանածագործական նյութեր՝ կոշկեղենի	5	-	-	300՝ արտաքին

համար				դետալների համար, 75՝ ներքին դետալների համար
Մանածագործական նյութեր՝ դեկորատիվ, կահույքի, ծածկեր և գորգագործական արտադրատեսակ-ներ, թաղիք, նրբաթաղիք	-	-	15	300
Մանածագործական աստառային նյութեր, աստառի՝ ձևակայունության և ջերմամեկուսացման համար	-	60 (աստառ, բացի հողմապաշտպանից)	15	300
Մանածագործական նյութեր՝ խավավոր՝ թավիշ, պլյուշ	-	-	15	300
Արհեստական մորթի՝ կոշկեղենի համար	-	-	-	300՝ արտաքին դետալների համար, 75՝ ներքին դետալների համար

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

* Հիգրոսկոպիկություն» ցուցանիշի մասով պահանջներ չեն սահմանվում ճաշասենյակի և խոհանոցի սպիտակեղենի ու առաջին շերտի սպորտային նշանակության հագուստի համար (ընդ որում՝ արտադրատեսակների մականշվածքի վրա սպորտային նշանակության նշումը պարտադիր է)։

** «Օդաթափանցելիություն» ցուցանիշի մասով պահանջներ չեն սահմանվում»՝

- այն արտադրատեսակների համար, որոնց կառուցվածքը (սարաֆաններ, կիսաշրջազգեստներ, ժիլետներ) կամ նյութի կազմությունը (փուխր հյուսվածքով, ժանեկակերպ հյուսվածքով, ցանցկեն կամ նույնանման նյութեր) ենթադրում են բարձր օդաթափանցելիություն.
- այն արտադրատեսակների համար, որոնք ունեն օդափոխանակություն ապահովող կառուցվածքային տարրեր.
- աշուն–ձմեռ տեսականու կիսակոմբինիզոնների և տաբատների համար.
- գուլպեղենի, (այդ թվում՝ ձմեռային), կորսետային արտադրատեսակների համար.
- վերմակների և բարձերի համար.
- ճաշասենյակի և խոհանոցի սպիտակեղենի համար:

(ծանոթագրությունները խմբ. ԵՏՀԽ 09.08.16 թիվ 60)

(հավելվածը խմբ. ԵՏՀԽ 09.08.16 թիվ 60)

Հավելված 3
«Թեթև արդյունաբերության արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 017/2011)

Մանածագործական, պոլիմերային և այլ նյութերից, կաշվից, արհեստական կաշվից և դրանցից պատրաստված թեթև արդյունաբերության արտադրատեսակների քիմիական անվտանգության պահանջները

Արտադրատեսակի պատրաստման համար նյութեր	Որոշվող նյութի անվանումը	Նորմատիվ	
		ջրային միջավայր (մգ/դմ), ոչ ավելի	օդային միջավայր (մգ/մ³), ոչ ավելի
Բնական՝ բուսական հումքից	Ֆորմալդեհիդ*	-	0.003
Ստվարաթուղթ	Ֆորմալդեհիդ*	-	0.003
Արհեստական (վիսկոզային, ացետատային)	Ֆորմալդեհիդ*	-	0.003
Պոլիեթերային	Ֆորմալդեհիդ*	-	0.003

	Դիմեթիլտերեֆտալատ	1.5	0.01
	Ացետալդեհիդ	0.2	0.01
Պոլիամիդային	Ֆորմալդեհիդ*	-	0.003
	Կապրոլակտամ	1.0	0.06
	Հեքսամեթիլենդիամին	0.01	0.001
Պոլիակրիլոնիտրիլային	Ֆորմալդեհիդ*	-	0.003
	Ակրիլոնիտրիլ	2.0	0.03
	Դիմեթիլֆորմամիդ	10	0.03
Պոլիվինիլքլորիդային	Ֆորմալդեհիդ*	-	0.003
	Ացետոն	2.2	0.35
	Բենզոլ	0.01	0.1
	Տոլուոլ	0.5	0.6
	Դիօկտիլֆտալատ	2.0	0.02
	Դիբութիլֆտալատ	չի թույլատրվում	չի թույլատրվում
	(***դիրքը հանվել է ԵՏՀԽ 09.08.16 թիվ 60)***		
	Կադմիում (Cd)**	0.001	-
	Ցինկ (Zn)**	0.1	-
	Քլորմեթան (վինիլքլորիդ)**	0.01	0.01
Պոլիվինիլացետատային	Ֆորմալդեհիդ*	-	0.003
	Վինիլացետատ	0.2	0.15
Պոլիոլեֆինային	Ֆորմալդեհիդ*	-	0.003
	Ացետալդեհիդ	0.2	0.01
Պոլիուրեթանային	Ֆորմալդեհիդ*	-	0.003
	Էթիլենգլիկոլ	1.0	1.0
	Ացետալդեհիդ	0.2	0.01
	Տոլուիլոնդիիզոցիանատ**	-	0.002
	Բենզոլ	0.01	0.1
	Տոլուոլ	0.5	0.6
Պոլիօրգանոսիլակ-սաններ (սիլիկոններ)	Ֆորմալդեհիդ*	-	0.003
	Ացետալդեհիդ	0.2	0.01
	Մեթիլային սպիրտ	3.0	0.5
Կաշի, մորթի	Ֆորմալդեհիդ*	300	0.003
	Ջրով լվացվող քրոմի (VI) զանգվածային մասը, մգ/կգ	-	-
		3.0	-
Ռետինե	Ֆորմալդեհիդ*	-	0.003
	Թիուրամ Ε	0.5	-
	Դիօկտիլֆտալատ	2.0	0.02
	Դիբութիլֆտալատ	չի թույլատրվում	չի թույլատրվում
Լուծազատվող քիմիական տարրեր (կախված ներկանյութից)	Մկնդեղ (As)	1.0	-
	Կապար (Pb)	1.0	-
	Քրոմ (Cr)	2.0	-
	Կոբալտ (Co)	4.0	-
	Պղինձ (Cu)	50.0	-
	Նիկել (Ni)	4.0	-

(աղյուսակը փոփ., լրաց. ԵՏՀԽ 09.08.16 թիվ 60)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

* Ազատ ֆորմալդեհիդի պարունակությունը որոշվում է նյութերի բոլոր տեսակներում և կազմում է՝

- 75 մկգ/գ-ից ոչ ավելի՝ հագուստում և առաջին շերտի հագուստի, կոշիկի ներքին շերտերի, տնային և լողափային կոշիկների համար նյութերում.

- 300 մկգ/գ-ից ոչ ավելի՝ մնացած արտադրատեսակների համար։

Նորմատիվը նշված է առանց հաշվի առնելու մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածությունը

Գորգերից, գորգագործական արտադրատեսակներից և հատակի ծածկերից ֆորմալդեհիդի արտաճառագայթումը օդային միջավայր չպետք է գերազանցի 0,1 մգ/մ3։

** Տվյալ նյութի բովանդակությունը սահմանվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ տվյալ նյութի հետազոտությունների (փորձարկումների) և չափումների կանոններ ու մեթոդներ պարունակող միջպետական ստանդարտները ստանդարտացման ոլորտում հետազոտությունների (փորձարկումների) և չափումների

կանոններ ու մեթոդներ, այդ թվում՝ «Թեթև արդյունաբերության արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 017/2011) պահանջների կիրառման և կատարման ու Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 876 որոշմամբ հաստատված արտադրանքի համապատասխանության գնահատում (հաստատում) իրականացնելու համար անհրաժեշտ նմուշառման կանոններ պարունակող փաստաթղթերի ցանկում ներառելու մասին որոշումն ուժի մեջ մտնելու ամսաթվից 12 ամիսը լրանալուց հետո:

(ծանոթագրությունները լրաց. ԵՏՀԽ 09.08.16 թիվ 60)

(հավելվածը փոփ., լրաց. ԵՏՀԽ 09.08.16 թիվ 60)

Հավելված 4
«Թեթև արդյունաբերության արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 017/2011)

Մանածագործական-օժանդակ նյութերով մշակված մանածագործական նյութերի և դրանցից պատրաստված արտադրատեսակների քիմիական անվտանգության պահանջները

Արտազատվող ցնդող քիմիական նյութերի անվանումները	Նորմատիվ՝ օդային միջավայր (մգ/մ), ոչ ավելի
Մեթիլակրիլատ	0.01
Մեթիլմեթակրիլատ	0.01
Ստիրոլ	0.002
Քսիլոլներ (իզոմերների խառնուրդ)	0.2
Վինիլացետատ	0.15
Մեթիլային սպիրտ	0.5
Բութիլային սպիրտ	0.1
Ֆենոլ	0.003
Ացետալդեհիդ	0.01
Տոլուոլ	0.6

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.

Թույլատրվում է «ֆենոլի» ցուցանիշների ընտրովի վերահսկողության հնարավորությունը

Ցուցանիշներն ուսումնասիրվում են՝ կախված կիրառվող վերջնամշակվածքի (ապրետի) բաղադրությունից:

Հավելված 5
«Թեթև արդյունաբերության արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 017/2011)

ոշկեղենի մեխանիկական ու կենսաբանական անվտանգության պահանջները

Արտադրանքի անվանումը, կոշիկի տեսակը	Անվտանգության ցուցանիշի անվանումը	Ցուցանիշի նորմավորվող արժեքը
1	2	3
Տղամարդու կամ կանացի կոշիկ՝ կաշվից, մանածագործվածքից, արհեստական և սինթետիկ նյութերից ու կոմբինացված կոշկերեսով	Քիմիական մեթոդներով ամրացվող կոշիկի ներբանի ամրակման ամրությունը՝ բացի տնային և ճամփորդական կոշիկներից, Ն/սմ	
	- կաշվից	34-ից ոչ պակաս
	- կաշվե մանրաթելերից և ոչ ծակոտկեն ռետինից	42-ից ոչ պակաս
	- ծակոտկեն ռետինից, պոլիմերային նյութերից, հաստությունը՝	
	մինչև 6 մմ (ներառյալ)	42-ից ոչ պակաս
	ազ. 6-ից 10 մմ (ներառյալ)	53-ից ոչ պակաս
	ազ, 10 մմ	63-ից ոչ պակաս
	Քիմիական մեթոդներով ամրացվող կոշիկի ներբանի ամրակման ամրություն (տնային և ճամփորդական կոշիկների համար),	

	Ն/սմ	
	- կաշվից	29-ից ոչ պակաս
	կաշվե մանրաթելերից և ոչ ծակոտկեն ռետինից	36-ից ոչ պակաս
	ծակոտկեն ռետինից, պոլիմերային նյութերից, հաստությունը՝	
	մինչև 6 մմ (ներառյալ)	36-ից ոչ պակաս
	ազ. 6-ից 10 մմ (ներառյալ) Թելային մեթոդներով ամրացվող կոշիկի ներքևի հատվածի դետալների ամրակման ամրությունը՝ բացի տնային և ճամփորդական կոշիկներից, Ն/սմ	45-ից ոչ պակաս
	- ներբան (կաշվից) կոշկերեսի (կաշվից, մանածագործական նյութից, արհեստական և սինթետիկ կաշվից) ձևվածքով ՝ կետակարի, թափանցակարի, սանդալային մեթոդներով ամրացվող	140-ից ոչ պակաս
	- ներբան (ոչ ծակոտկեն ռետինից, կաշվից) կոշկերեսի ձևվածքով (կաշվից)՝ սոսնձային թափանցակարի, միաշար սոսնձային թափանցակարի մեթոդներով ամրացման համար	110-ից ոչ պակաս
	- ներբան (ոչ ծակոտկեն ռետինից, պոլիուրիտանից) կոշկերեսի ձևվածքով (կաշվից)՝ կողային մեթոդով ամրացման համար	120-ից ոչ պակաս
	- ներբան (ծակոտկեն ռետինից) տակդիրով (կաշվից)՝ ռանտով-սոսնձային, կետակարով-սոսնձային, սանդալային-սոսնձային, միաշար-սանդալային-սոսնձային, մեխային-սոսնձային մեթոդներով ամրացման համար	30-ից ոչ պակաս
	- ներբան (կաշվից) ռանտով (ռանտերի համար կաշվից)՝ ռանտային մեթոդով ամրացվող	130-ից ոչ պակաս
	- ներբան (կաշվից) եզրահատմամբ, ռանտով (ռանտերի համար կաշվից)՝ ռանտային մեթոդով ամրացվող	140-ից ոչ պակաս
	- տակդիր (կաշվից) կոշկերեսի ձևվածքով (կաշվից)՝ սանդալային-սոսնձային, կետակարով-սոսնձային, միաշար-սանդալային-սոսնձային մեթոդներով ամրացվող	120-ից ոչ պակաս
	- տակդիր (կաշվից) ռանտով (ռանտերի համար կաշվից)՝ ռանտային-սոսնձային մեթոդով ամրացման համար	120-ից ոչ պակաս
	- ռանտ (ռանտերի համար կաշվից) միջատակով (կաշվից)՝ ռանտային, ռանտային-սոսնձային մեթոդներով ամրացման համար	120-ից ոչ պակաս
	Թելային մեթոդներով ամրացվող կոշիկի ներքևի հատվածի դետալների ամրակման ամրություն, տնային և ճամփորդական կոշիկների համար, Ն/սմ	
	- ներբան (կաշվից) կոշկերեսի ձևվածքով (կաշվից, մանածագործական նյութից, արհեստական և սինթետիկ կաշվից)՝ կետակարի, թափանցակարի,	119-ից ոչ պակաս

	սանդալային մեթոդներով ամրացվող	
	- ներբան (ծակոտկեն ռետինից) տակդիրով (կաշվից)՝ կետակարով-սոսնձային, սանդալային-սոսնձային, միաշար-սանդալային-սոսնձային մեթոդներով ամրացվող	26-ից ոչ պակաս
	- տակդիր (կաշվից) կոշկերեսի ձևվածքով (կաշվից)՝ սանդալային-սոսնձային, կետակարով-սոսնձային, միաշար-սանդալային-սոսնձային մեթոդներով ամրացվող	102-ից ոչ պակաս
	Կրունկի ամրակման ամրությունը	850-ից ոչ պակաս
	միջին (30-ից 45 մմ), բարձր (ազ. 45-ից 70 մմ) և առանձնապես բարձր (70 մմ-ից ավելի), Ն	
	Կոշիկի ճկունությունը (ճամփորդական, տնային, լողափային կոշիկների համար), Ն (Ն/սմ)	
	- հետևյալ նյութերից ներբանի վրա սոսնձային եղանակով ամրացվող՝	
	կաշի	127-ից (14-ից) ոչ ավելի
	ոչ ծակոտկեն ռետին, կաշվե մանրաթելերից	91-ից (10-ից) ոչ ավելի
	ծակոտկեն ռետին	63-ից (7-ից) ոչ ավելի
	- ձուլվածքային, միաշար-ձուլվածքային, միաշար-սոսնձային, սանդալային, միաշար-սանդալային մեթոդներով ամրացվող, մամլիչ վուլկանացման, միաշար-մամլիչ, կաշվից, ոչ ծակոտկեն ռետինից, ծակոտկեն ռետինից և պոլիմերային նյութերից ներբանին	45-ից (5-ից) ոչ ավելի
Կոշիկ՝ սպորտի խաղային տեսակների համար	Ներբանի կայունությունը բազմակի ճկման, բոլորապտույտի նկատմամբ,	
	- բասկետբոլի համար	$10 \cdot 10^3$-ից ոչ պակաս
	- վոլեյբոլի համար	20.10^3-ից ոչ պակաս
	- թենիսի համար	15.10^3-ից ոչ պակաս
	- կրոսի համար	20.10^3-ից ոչ պակաս
	Ներբանի հարվածային ամրություն, Ջ.	
	- բասկետբոլի համար	20-ից ոչ պակաս
	- վոլեյբոլի համար	10-ից ոչ պակաս
	- թենիսի համար	15-ից ոչ պակաս
	- կրոսի համար	15-ից ոչ պակաս
Ֆուտբոլ ու ռեգբի խաղալու և սպորտի այլ տեսակների համար կոշիկ	Կոշիկի ներբանի ամրակման ամրությունը	
	- թափանցակարի մեթոդով ամրացվող, Ն/սմ	140-ից ոչ պակաս
	- սոսնձային մեթոդով ամրացվող, Ն	140-ից ոչ պակաս
	Ականոցի ամրակման ամրությունը, Ն	1500-ից ոչ պակաս
Կոշիկ՝ ռետինե,	Անջրանցիկությունը	Կոշիկի

պոլիմերային, ռետինե-մանածագործական և պոլիմերային-մանածագործական (բացի տնային, ճամփորդական և լողափային կոշիկներից)		ներքին մակերևույթը պետք է լինի չոր
	Ռետինե կաշեփոկի միացման ամրությունը մանածագործական կոշկերեսին, Ն/մ	1200-ից ոչ պակաս
	Ռետինե երկարաճիտ կոշիկների հաստությունը չափումների գոտիներում, մմ, ոչ պակաս, քան՝	
	քթային, առաջավոր մաս, ճիտքը վերելքի մասում,	2.5
	ճիտքի ներքևի և վերևի մասը,	1.5
	կրունկը ներբանով,	22.0
	ներբանը կոշկատակի մասում,	8.0

Հավելված 6
«Թեթև արդյունաբերության արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 017/2011)

Կաշվե-գալանտերեային արտադրատեսակների մեխանիկական ու կենսաբանական անվտանգության պահանջները

Արտադրանքի անվանումը	**Հատկությունների ցուցանիշի անվանումը**	**Ցուցանիշի նորմավորվող արժեքը**
1	2	3
Պայուսակներ (կենցաղային և հատուկ), պորտպլեդներ, ճամպրուկներ, թղթապայուսակներ (պորտֆելներ), ուսապայուսակներ, թիկնապայուսակներ, պատյաններ և թղթապանակներ	Բռնակների ամրակման հանգույցների խզման բեռնվածությունը կամ առավելագույն բեռնվածքը՝ արտադրատեսակների համար, Ն.	
	- պայուսակներ՝ կանացի և ամենօրյա, տղամարդու (այդ թվում՝ երիտասարդական), թիկնապայուսակներ՝ կանացի, տղամարդու, երիտասարդական	50-ից ոչ պակաս
	- պայուսակներ՝ տնտեսական, լողափային՝ արհեստական կաշվից, երկտակված գործվածքներից, ներծծանքով կամ ծածկույթով	90-ից ոչ պակաս
	- առանց ներծծվածքի և ծածկույթի գործվածքներից, պոլիմերային նյութերից	50-ից ոչ պակաս
	- պայուսակներ՝ սովորողների համար, պորտֆելներ՝ կանացի, թղթապանակներ՝ աշխատանքային	70-ից ոչ պակաս
	- պայուսակներ՝ ճամփորդական, սպորտային, պորտֆելներ՝ ճամփորդական, տղամարդու, ճամպրուկներ-դիպլոմատներ, ճամպրուկներ՝ ճամփորդական, փափուկ և կիսակոշտ կառուցվածքի, թիկնապայուսակներ՝ ճամփորդական	170-ից ոչ պակաս
	- ճամպրուկներ՝ ճամփորդական, կոշտ կառուցվածքի և ճամպրուկ-հանդերձապահարան	400-ից ոչ պակաս
	Ներկվածքի կայունությունը՝ բալերով	
	- չոր շփման նկատմամբ	4*-ից ոչ պակաս
	- թաց շփման նկատմամբ	3*-ից ոչ պակաս
	- «քրտինքի» դեպքում	3*-ից ոչ պակաս
	Թելային կարի ամրությունը, Ն/սմ, արտադրատեսակների համար	
	- պայուսակներ՝ կանացի և ամենօրյա, տղամարդու (այդ թվում՝	20-ից ոչ պակաս

	երիտասարդական), թիկնապայուսակներ՝ կանացի, տղամարդու, երիտասարդական	
	- պայուսակներ՝ տնտեսական, լողափային՝ արհեստական կաշվից, երկտակված գործվածքներից, ներծծանքով կամ ծածկույթով	30-ից ոչ պակաս
	- առանց ներծծվածքի և ծածկույթի գործվածքներից, պոլիմերային նյութերից	15-ից ոչ պակաս
	- պայուսակներ, պորտֆելներ՝ կանացի, թղթապանակներ՝ աշխատանքային	30-ից ոչ պակաս
	- պայուսակներ՝ ճամփորդական, սպորտային, պորտֆելներ՝ ճամփորդական, տղամարդու, ճամպրուկներ-դիմպլոմատներ, ճամպրուկներ՝ ճամփորդական փափուկ և կիսակոշտ կառուցվածքի, թիկնապայուսակներ՝ ճամփորդական, ճամպրուկներ՝ ճամփորդական կոշտ կառուցվածքի, ճամպրուկ-հանդերձապահարան	40-ից ոչ պակաս
	Զոդովի կարի ամրությունը ԲՀՀ՝ շերտատման դեպքում, Ն/սմ. արտադրատեսակների համար ՄՊա տեղաշարժի դեպքում՝	
	- պայուսակներ՝ կանացի և ամենօրյա, տղամարդու (այդ թվում՝ երիտասարդական), թիկնապայուսակներ՝ կանացի, տղամարդու, երիտասարդական	շերտատման դեպքում՝ 20-ից ոչ պակաս, տեղաշարժի դեպքում՝ 0,2-ից ոչ պակաս
	- պայուսակներ՝ տնտեսական, լողափային՝ արհեստական կաշվից, երկտակված գործվածքներից, ներծծանքով կամ ծածկույթով	շերտատման դեպքում՝ 25-ից ոչ պակաս, տեղաշարժի դեպքում՝ 0,30-ից ոչ պակաս
	- առանց ներծծվածքի և ծածկույթի գործվածքներից, պոլիմերային նյութերից	շերտատման դեպքում՝ 10-ից ոչ պակաս, տեղաշարժի դեպքում՝ 0,15-ից ոչ պակաս
	- պայուսակներ, պորտֆելներ՝ կանացի, թղթապանակներ՝ աշխատանքային	շերտատման դեպքում՝ 25-ից ոչ պակաս, տեղաշարժի դեպքում՝ 0,3-ից ոչ պակաս
	- պայուսակներ՝ ճամփորդական, սպորտային, պորտֆելներ՝ ճամփորդական, տղամարդու, ճամպրուկներ-դիմպլոմատներ, ճամպրուկներ՝ ճամփորդական փափուկ և կիսակոշտ կառուցվածքի, թիկնապայուսակներ՝ ճամփորդական, ճամպրուկներ՝ ճամփորդական կոշտ կառուցվածքի, ճամպրուկ-հանդերձապահարան	շերտատման դեպքում՝ 35-ից ոչ պակաս, տեղաշարժի դեպքում՝ 0,4-ից ոչ պակաս

Գոտեփոկեր և ժամացույցի համար փոկեր	Ներկվածքի կայունությունը՝ բալերով	
	- չոր շփման նկատմամբ	4*-ից ոչ պակաս
	- թաց շփման նկատմամբ	3*-ից ոչ պակաս
	- «քրտինքի» դեպքում	3*-ից ոչ պակաս
Կապոցափոկեր՝ ուղեբեռային	Բռնակների և ուսագոտիների ամրակման հանգույցի խզման բեռնվածությունը, Ն	170-ից ոչ պակաս
	Ներկվածքի կայունությունը՝ բալերով	
	- չոր շփման նկատմամբ	4*-ից ոչ պակաս
	- թաց շփման նկատմամբ	3*-ից ոչ պակաս
Ձեռնոցներ և թաթմաններ	Ներկվածքի կայունությունը՝ բալերով	
	- չոր շփման նկատմամբ	4*-ից ոչ պակաս
	- թաց շփման նկատմամբ	3*-ից ոչ պակաս
	- «քրտինքի» դեպքում	3*-ից ոչ պակաս

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.

* - կաշվի համար ցուցանիշ

Այլ նյութերի ներկվածքի ամրություն պետք է լինի 3 բալից ոչ պակաս։

Հավելված 7
«Թեթև արդյունաբերության արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 017/2011)

Կաշվե-գալանտերեային արտադրատեսակների և դրանց պատրաստման համար նյութերի քիմիական անվտանգության պահանջները՝ կախված նյութի բաղադրությունից

Նյութեր	**Արտազատվող նյութերի անվանումները**	**Նորմատիվ**
		Օդային միջավայր (մգ/մ), ոչ ավելի
Բնական նյութեր բուսական հումքից, բնական կաշի	ֆորմալդեհիդ	0.003*
Պոլիամիդային	ֆորմալդեհիդ	0.003*
	կապրոլակտամ	0.06
	հեքսամեթիլենդիամին	0.001
Պոլիեթերային	ֆորմալդեհիդ	0.003*
	դիմեթիլտերեֆտալատ	0.01
	ացետալդեհիդ	0.01
Պոլիակրիլոնիտրիլային	ֆորմալդեհիդ	0.003*
	ակրիլոնիտրիլ	0.03
	վինիլացետատ	0,15
Պոլիուրեթանային	ֆորմալդեհիդ	0.003*
	տոլուիլոնդիիզոցիանատ	0.002
	ացետալդեհիդ	0.01
Պոլիվինիլքլորիդային	ֆորմալդեհիդ	0.003*
	Ֆենոլ	0.003
	դիօկտիլֆտալատ	0.02
	դիբութիլֆտալատ	չի թույլատրվում
	ացետոն	0.35
Արհեստական՝ վիսկոզային և ացետատային	ֆորմալդեհիդ	0.003*
Պոլիոլեֆինային	ֆորմալդեհիդ	0.003*
	ացետալդեհիդ	0.01
Վինիլացետատներ (արհեստական կաշի)	ֆորմալդեհիդ	0.003*
	վինիլացետատ	0.15

	դիօկտիլֆտալատ	0.02
	դիբութիլֆտալատ	չի թույլատրվում
Կաշի՝ արհեստական, պոլիուրեթանային կամ պոլիվինիլուրեթանային ծածկույթով	ֆորմալդեհիդ	0.003*
	դիբութիլֆտալատ	չի թույլատրվում
	դիօկտիլֆտալատ	0.02
Ռետինե	ֆորմալդեհիդ	0.003*
	դիբութիլֆտալատ	չի թույլատրվում
	դիօկտիլֆտալատ	0.02
Ստվարաթուղթ	ֆորմալդեհիդ	0.003*

* Նորմատիվը նշված է՝ առանց հաշվի առնելու մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածությունը:

Հավելված 8
«Թեթև արդյունաբերության արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 017/2011)

Կաշվի, մորթու և դրանցից պատրաստված արտադրատեսակների քիմիական և կենսաբանական անվտանգության պահանջները

Արտադրանքի անվանումը	**Հատկությունների ցուցանիշի անվանումը**	**Ցուցանիշի նորմավորվող արժեքը**
1	2	3
Կաշի՝ կոշիկի ներքևի հատվածի, ռանտերի, պրոթեզների և երաժշտական գործիքների դետալների համար	Ջրով լվացվող քրոմի (VI) զանգվածային մասը, մգ/կգ	3.0-ից ոչ ավելի
	Ազատ ֆորմալդեհիդի զանգվածային մասը, մկգ/գ	300-ից ոչ ավելի
		75-ից ոչ ավելի (միջատակի կաշվի համար)
կաշվե կիսաֆաբրիկատներ		
Կաշի՝ կոշկերեսի և կոշիկի աստառի, հագուստի և գլխի հարդարանքների, ձեռնոցների և թաթմանների համար, գալանտերեային, կահույքի և տարբեր արտադրատեսակների երեսքաշման համար	Ջրով լվացվող քրոմի (VI) զանգվածային մասը, մգ/կգ	3.0-ից ոչ ավելի
	Ազատ ֆորմալդեհիդի զանգվածային մասը, մկգ/գ	300-ից ոչ ավելի
		75-ից ոչ ավելի (աստառի կաշվի համար)
	Ներկվածքի կայունությունը՝ բալերով	
	- չոր շփման նկատմամբ	4-ից ոչ պակաս
	- թաց շփման նկատմամբ	3-ից ոչ պակաս
	- «քրտինքի» դեպքում	3-ից ոչ պակաս
Արհեստական կաշի՝ կոշկերեսի և կոշիկի աստառի, հագուստի և գլխի հարդարանքների, ձեռնոցների և թաթմանների համար, գալանտերեային, կահույքի և տարբեր արտադրատեսակների երեսքաշման համար	Ներկվածքի կայունությունը՝ բալերով	
	- չոր շփման նկատմամբ	4-ից ոչ պակաս
	- թաց շփման նկատմամբ	4-ից ոչ պակաս

Հագուստ և արտադրատեսակներ մորթուց, մորթե մորթիկներ՝ մշակված	Ազատ ֆորմալդեհիդի զանգվածային մասը, մկգ/գ	300-ից ոչ ավելի
	Ցրով լվացվող քրոմի (VI) զանգվածային մասը, մգ/կգ	3,0-ից ոչ ավելի
	Մորթու կաշվե կտորի զոդման ջերմաստիճանը, C	50-ից ոչ պակաս
	Մորթու կաշվե կտորի ջրային լուծամզուքի pH	ոչ պակաս, քան 3,5
	Ներկվածքի կայունությունը չոր շփման նկատմամբ, բալ	
	- կաշվե կտորի (կաշվե կտորի դրվագմամբ մշակված մորթե մորթիկների և կաշվե կտորը դրսի կողմով պատրաստված արտադրատեսակների համար)	3-ից ոչ պակաս
	- մազային ծածկույթի	4-ից ոչ պակաս

(հավելվածը փոփ. ԵՏՀԽ 09.08.16 թիվ 60)
(կանոնակարգը փոփ., խմբ., լրաց. ԵՏՀԽ 09.08.16 թիվ 60)

Հաստատված է
Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 876 որոշմամբ
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 235 որոշման խմբագրությամբ)

Ստանդարտների ցանկ, որոնց կամավոր հիմունքով կիրառման արդյունքում ապահովվում է «Թեթև արդյունաբերության արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 017/2011) պահանջների պահպանումը
(ցանկն ուժը կորցրել է ԵՏՀԿ 22.12.20 թիվ 180)

Հաստատված է
Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 876 որոշմամբ
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 235 որոշման խմբագրությամբ)

Ստանդարտացման ոլորտի փաստաթղթերի ցանկ, որոնք պարունակում են «Թեթև արդյունաբերության արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 017/2011) պահանջները կիրառելու և կատարելու ու արտադրանքի համապատասխանության գնահատում (հավաստում) իրականացնելու համար անհրաժեշտ՝ հետազոտությունների (փորձարկումների) և չափումների կանոններ ու մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ
(ցանկն ուժը կորցրել է ԵՏՀԿ 22.12.20 թիվ 180)

Պաշտոնական հրապարակման օրը՝ 2 մայիսի 2023 թվական: